

6304

Պրոլետարների բոլոր յերկրների, միացի՛ք

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԶԱԽԶԱԽԵԼ ՑԱՆՔԻ ՅԵՎ
ՀԱՅԱՍԹԵՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՍ
ԿՈՒԼԱԿՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՍԱԲՈՏԱԺԸ
ԿՈՒԲԱՆԻ ՌԱՅՈՆՆԵՐՈՒՄ

3K113
Շ - 40



ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ «ԶՅՈՒՍԻՍԱՅՅԻՆ ԿՈՎԿԱՍ»
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ 1933

CA 563

25 AUG 2005

Պրոպագանդայի և հասարակական կրթության նախարարություն

3KП13

14 NOV 2009

Ը-40

ԶԱԽԶԱԽԵԼ ՑԱՆՔԻ ՅԵՎ
ՀԱՑԱՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ
ԿՈՒԼԱԿՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՍԱԲՈՏԱԺԸ
ԿՈՒԲԱՆԻ ՌԱՅՈՆՆԵՐՈՒՄ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ «ՅՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ»
ՌՈՍՏՈՎ-ԳՈՆ 1933

13.07.2013

6304

Ռ. ՇՆՐԱՆԻՍՏՈՎ

**ՋԱՆՋԱՆՍԵԼ ՑԱՆԻ ՑԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐԼԱՄԱՆՏԻ ԳԵՄ
ԿՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐԴԱՄ ՍԱՐԴՏԱԺԸ
ԿՈՒՐԱՆԻ ՈԱՅՈՆՆԵՐՈՒՄ**

Վերջին ժամանակներս հրապարակվել են Յերկրկոմի վորոշումները, վորոնք ընդունված են Կենտկոմի ներկայացուցիչների մասնակցությամբ և վերաբերում են հացամթերումներին, հատկապես Կուբանի ցանքին և հացամթերումներին: Բացի դրանից, հրապարակված է Կենտկոմի և ԿՎՀ-ի վորոշումը՝ Հյուսիսային Կովկասի գյուղական կազմակերպությունների գտման մասին: Այս վորոշումները, վորոնք մեզ համար հսկայական քաղաքական նշանակություն ունեն, ամբողջովին բղխում են մեր կուսակցության գիծը ճիշտ կիրառելուց, վորտեղի յե ունենում դասակարգային պայքարի և սոցիալիստական շինարարության այն պայմաններում, վորոնք ստեղծվել են մեր յերկրամասում:

Վորպեսդի սա ավելի պարզ լինի, հարկավոր է համառոտ կանգ առնել այդ պայմանների վրա: Հյուսիսային Կովկասը ամենախոշոր հաջողություններ և մեծամեծ նվաճումներ ունի գյուղատնտեսության վերակառուցման, կոլանտեսությունների ու խորհրտնտեսությունների կազմակերպման գործում: Կոլանտեսությունների ու խորհրտնտեսությունների ցանքերի տարածությունը հասնում է 90 տոկոսի Կովկասի ու խորհրդային տնտեսություններն արդեն ամրապնդվել են և աշխատում են ինչպես իսկական սոցիալիստական տնտեսություններ: Յեվ հենց սրա հիման վրա կարելի յեղավ գործադրել այն բոլորովին նոր տեխնիկան, վոր հանդիսանում են՝ տրակտորը, կոմբայնը, ավտոմեքենան: Կատարված է համաշխարհային պատմական նշանակություն ունեցող մի գործ: Հյուսիսային Կովկասի կուսակազմակերպությունը սրանով հպարտանալու իրավունք ունի:

Անցյալ տարի Հյուսիսային Կովկասի կոլեկտիվ ու խորհրդային տնտեսությունները պետությունը տվին 200 միլիոն փութ միայն հաց և հսկայական քանակությամբ ուրիշ գյուղատնտեսական արտադրանք: Այսպիսով Պոստովի քաղկոմի զեկուցողների հրահանգչական խորհրդակցությանը 1932 թ. նոյեմբերի 12-ին արտասանած ճառը:

ՄԱՐՏ 1933



59502-66



Книгоиздательство
"Северный Кавказ"

բանք: Այդ ավելի շատ է, քան յեղել է յերբևե, քան տվել է Հյուսիսային Կովկասը նախապատերազմյան ամենաառատ շրջանում:

Վերջին տարում անկասկած բարելավվել է, սկսել է առաջադիմել անասնաբուժությունը, վորը սաստիկ տուժել էր կոլեկտիվացման տարիներում: Յեթե համեմատենք անցյալ տարիներում և այս տարի հարկվող անասունների թիվը, կտեսնենք, վոր անցյալ տարիներում խիստ պակաս են յեղել թե լծկան և թե մթերատու անասունները: Այս տարի բավական զգալի չափով ավելացել են հորթերը, մթերատու և մանր անասունները (խոզեր, վոչխարներ և այլն):

Կարելի չէ թվել կոլտնտեսությունների մի շարք այլ նվաճումները, մասնավորապես շատ աշխատանք պահանջող տեխնիկական կուլտուրաների ահագին զարգացումը. սակայն յես դրա վրա կանգ չեմ առնի:

Կիսոսեմ խնդրի մյուս կողմի մասին, — բացասական լուրջ փաստերի, մեր գյուղատնտեսության և կոլտնտեսության շինարարության նոր դժվարությունների մասին: Մենք միշտ ել գիտեցինք, վոր գյուղացիական անհատական, բաժան-բաժան տնտեսությունը վերածել կոլեկտիվ տնտեսության — դա մի ծանր գործ է, մի գործ, վորը կարող է իրականացնել միայն հաղթանակած բանվոր դասակարգը, կուլակություն դեմ մղելով ամենահամառ պայքար: Ավելին, մենք գիտենք և այս մասին ընկեր Ստալինը բազմաթիվ անգամ ասել է, վոր կոլտնտեսության կազմակերպման հետ դեռ նոր է սկսվում կոլտնտեսային մասսայի վերադաստիարակությունը, նրան սոցիալիստական հասարակության աշխատավորներ դարձնելու գործը, վոր վերջինս պահանջում է հետագայում համառ աշխատանք և պայքար, իսկ այդ պայքարը դասակարգային է:

Յերբեմն մտածում են այսպես. — քանի վոր կուլակությունը հիմնականում վերացված է վորպես դասակարգ, քանի վոր նա ապակուլակացված է, ուրեմն կուլակի բանը վերջացել է: Չեն հասկանում, վոր կուլակության և սպիտակ-զվարդիական հակահեղափոխության մնացորդները, թափթփուկները, մանավանդ. կուլբանում, դեռ բավական ուժեղ են, վորպեսզի զրզռեն և փորձեն կազմակերպել այն մանր-սեփականատիրական տրամադրությունները, վորոնցով դեռ վարակված է կոլտնտեսականների մի մասը: Չեն հասկանում, վոր կուլակային տարրերը կոլտնտեսությունների և խորհրդային իշխանության դեմ դեռ կարող են ոգտագործել դարավոր սովորությունները, վորոնք հանդիսանում են հին կարգերի հսկայական ուժով: Հենց դրա մասին է լինում խոսքը, յերբ մենք խոսում ենք ցանքի և հացամթերումների դեմ կուլակության կազմակերպած սարսափի մասին: Հենց դրանում է մեր վերջին վորոշումների քաղաքական իմաստը:

Վերջերս յես յեղա Տիմաշևսկի ռաշոնի Մեդվեդովսկայա ստանիցայում, վորը սև տախտակին է հանված: Տեսա «Կրասնոարմեյց» կոլտնտեսությունը: Այս կոլտնտեսության գլուխ էր կանգնած (այժմ վարչությունը ձերբակալված է) նախկին միջակ-կոլտնտեսականը: Մարդը շատ սահմանափակ է, գործից գլուխ չի հանում: Իսկ նրա կողքին կանգնած էր նախկին կուլակը, վորն ապակուլակացված է. կանգնած էր ապակուլակացված և աքսորված կուլակի յեղբայրը, դահիճ — սպիտակ-զվարդիականը: Կոլտնտեսության մասերում իբր ղեկավարներ, — հաշվապահներ, տնտեսավարներ և այլն, աշխատում էին սպիտակ զվարդիական բանակին պատկանող մարդիկ, վորոնք յերկար ու համառ կռվել են խորհրդային իշխանության դեմ, — պատժիչ-սպաներ, վորոնք ղնդակահարում և տանջում էին կարմիր բանակայիններին: Յեվ սրանք փաստորեն հանդիսանում էին «Կրասնոարմեյց» կոլտնտեսության ղեկավարները:

Հապա ինչպես, մտածում եք դուք, այդ սպիտակ զվարդիական, կուլակային հրոսակախումբը, վորը նստել էր կոլտնտեսության վարչության մեջ, իսկապե՞ս պայքար է մղել կոլտնտեսության համար, նրա ամրապնդման, ցանքի, հացը պետությունը հանձնելու կամ հավաքելու համար:

Վոչ, ընդհակառակն, այդ կոլտնտեսության ամբողջ գործունեությունից յերևում է, թե ինչպես հիշյալ տարրերը անկասկած գիտակցորեն քայքայում էին կոլտնտեսությունը, տնտեսությունը վարում այնպես, վորպեսզի կոլտնտեսականին մատնեն սովի և կարիքի: Յեվ այդ հնարավոր դարձավ այն պատճառով, վոր իրենք, կոլտնտեսականները, յերեկվա անհատականները, դեռ ևս զգալի չափով վարակված են մանր-բուրժուական հոգեբանությամբ, քիչ են հետաքրքրվում կոլտնտեսության գործերով, անփույթ են դեպի այդ գործերը: Այս բանը հնարավորություն է տալիս կուլակին ոգտագործել այդ դրությունը, կոլտնտեսության աշխատանքը գլխավորել այնպես, ինչպես հարկավոր է կուլակին, — այսինքն մեր դեմ, այսինքն խորհրդային իշխանության դեմ, և ի վնաս նույն կոլտնտեսության ու կոլտնտեսականի:

Այժմ յուրաքանչյուր լրագիր առատ նյութ է տալիս այն մասին, թե ինչպես կուլակն իրոք կազմակերպել է այդ սարսափը:

Բերեմ նաև Սլավյանսկի ռաշոնի Պոլտավսկայա ստանիցայի որինակը: Գուցե այն որինակն այնքան էլ բնորոշ չէ, քանի վոր այնտեղ անհատականները հսկայական քանակությամբ են կազմում, — 2/3 մաս, իսկ կոլտնտեսականները — 1/3 մաս, սակայն այնտեղ դրությունն այսպես է. յուրաքանչյուր անհատական տնտեսություն ցանել է մոտավորապես 1/4 հեկտար, նույնիսկ պակաս, և հացամթերումների պլանը կատարել է միայն 7 տոկոսով: Կոլտնտեսություններն ևս հեռու չեն

դնացել անհատականներին, Այս ստանիցան հայտնի յե Հյուսիսային Կովկասում մի ժամանակ խորհրդային իշխանության դեմ մղած իր շատ ակտիվ պայքարով, Յեվ անա մեր այդ ամենաթույլ տեղերում կուլակը կարողացավ հաջողությամբ կաղմակերպել սաբոտաժը: Սա վերաբերվում է առանձին ստանիցաներին, բայց վերաբերում է նաև ամբողջ Կուբանին, քանի վոր ինչպես գիտենք, այստեղ յեղել են սպիտակ-գվարդիական հսկայական կազմեր: յեղել են կուլակության առավել զորեղ արմատները:

Այո, հենց Պոլտավսկու որինակը ցույց է տալիս, թե ինչպես կուլակը կաղմակերպում է սաբոտաժը Պոլտավսկում, վորտեղ աշնանացանը կատարված է միայն 30 տոկոսով, վորտեղ անցյալ տարի դաշտերը, Կուբանի արգավանդ դաշտերը ծածկվեցին մոլախոտերով, հավանորեն մարդու հասակի բարձրությամբ, վորտեղ ցանքերի մտավորապես կեսը կորած է համարվում, վորտեղ յուրաքանչյուր հեկտարից հանձնված է միայն 1—1½ փութ հաց:

Սա նշանակում է, վոր այս ստանիցայում անհատականներն ու կոլտնտեսականներն անցյալ տարի, աշնանը հողը չեն վարել ինչպես պետք է, ձգձգել են ցանքը, սերմացույթի մի մասը գողացվել է ու չի ցանվել, այնուհետև ամառը չեն քաղհանվել արտերը, բերքը լավ չի հավաքվել,—այսինքն չեն աշխատել, կամ, լավագույն դեպքում ցույց են տվել, վոր իրր թե աշխատել են:

Յեթե դուք վերցնեք մեր յերկրամասի, մանավանդ Կուբանի կոլտնտեսությունները, ապա կտեսնեք, վոր կան վորոշ քանակով կոլտնտեսականներ, վորոնք բոլորովին չեն աշխատում: Չի կարելի աշխատանք համարել այն, յերբ մեկ տարվա ընթացքում կոլտնտեսականը ստացել է 10—20 աշխոր:

Յերբ մենատնտեսն աշխատում եր անհատապես, նա տարին բոլոր, թե լավ ու թե վատ յեղանակին քրտինք եր թափում: Դուք գիտեք, թե ինչպիսի յեզիպտական, ստրկական բնույթ եր կրում մենատնտես գյուղացու աշխատանքը, գյուղացու, վոր զինված եր պրիմիտիվ գործիքներով և սքնում եր իր մի կտոր հողի վրա: Ամբողջ ընտանիքը, մեծից մինչև փոքր, աշխատում եր մի կտոր հաց վաստակելու համար: Բայց հա, յերբ մենատնտեսը կոլտնտեսություն մտավ, կուլակն ու յենթակուլակը ոգտագործելով և չարաշահելով յերեկվա մենատնտեսի սեփականատիրական հողերանությունը, ամեն ինչ առնում է՝ աշխատանքի դեսիպլինան քայքայելու համար, սովորեցնում է քիչ աշխատել, վատ աշխատել: Յերբ դուք տեսնում եք կոլտնտեսականի ագարակը, աչքի յե ընկնում, վոր նրա անձնական բանջարանոցը հիանալի կերպով մշակված է, իսկ կոլտնտեսային դաշտերը հաճախ այլանդակ դրության մեջ են: Մի՞թե պարզ չե այս բոլորի

դասակարգային իմաստը: Մի՞թե պարզ չե, վոր կոլտնտեսականի բարեխիղճ և այդյունավետ աշխատանքի հորցը—սա դասակարգային կատարի պայքարի մի ճակատամասն է, վորտեղ կուլակը փորձում է կաղմակերպել սաբոտաժ և կոլտնտեսային շինարարության վիժում: Ամենից առաջ սրանով է բացատրվում յերկրամասի հետամնացությունը, վոր նկատվում է վերջին ժամանակվա մեր մի շարք աշխատանքներում: Դուք գիտեք, վոր մեզանում ուշացավ ցանքը, ուշացավ քաղհանը, բերքահավաքը: Աշխատանքների մի մասը բոլորովին չի կատարվում: Այդ նրանից է, վոր կոլտնտեսականների մի մասը, ամբողջ կոլտնտեսություններ չեն աշխատում այնպես, ինչպես վոր պիտի աշխատեն և ինչպես վոր կարելի յե պահանջել խոշոր, տեխնիկապես սպառազինված տնտեսություններից:

Յերկրորդը—այդ հասարակական, կոլտնտեսային գույքի հափշտակումն է և գողացումը: Այժմ բոլորովին պարզ է, վոր Կուբանում յայն տարածված է ցորենի, մանավանդ յեզիպտացորենի հափշտակությունն ուղղակի դաշտից: Յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ, յուրաքանչյուր ստանիցայում հայտնաբերված են տասնյակ և հարյուրավոր դեպքեր, յերբ անհատականներն և կոլտնտեսականները գողանում են կոլտնտեսությունների և խորհրտնտեսությունների հացը: Կարելի յե բերել մի շարք փաստեր, յերբ կոլտնտեսականներն ու անհատականները, վորոնք բոլորովին չեն ցանել և կոլտնտեսությունից հաց չեն ստացել, ունեն բավական զգալի պաշարներ, տասնյակ փթերով ցորեն և տասնյակ յերբեմն ել հարյուր փթերով յեզիպտացորեն: Այս յերևույթը Կուբանում անկասկած մասսայական բնույթ է ստացել և ամենամեծ սպառնալիքն է վոչ միայն հացամթերումների, այլ և կոլտնտեսությունների դեմ:

Յերևակայեցեք մի այնպիսի դրություն, յերբ կոլտնտեսականը, վորն աշխատում է բարեխիղճ կերպով, վորն ամբողջ ժամանակ աշխատում է դաշտում, վաստակում է աշխորներ, հարյուրավոր աշխորներ, դուրով կոլտնտեսություն, հաց չի գտնում, վորովհետև ծուլը, յերբեմն ել կոլտնտեսականը և ավելի հաճախ անհատականը, վորը վոչինչ չի առնում, զբաղվում է ցորենի ու յեզիպտացորենի հափշտակությամբ և ապրում է իր քեֆին: Պետք է իսկապես լինել գիտակից և ինքնազոծ կոլտնտեսական, վորպեսզի պաշտպանել կոլտնտեսությունն և պայքարել նրա համար, չնայելով այդպիսի աղաղակող դրության:

Չե վոր յերբ հացը գյուղացու անհատական, մասնավոր սեփականությունն էր, յերբ ամբողջ գույքն անհատական սեփականություն էր, գողությունը համարվում եր ամենամեծ հանցանք: Այդ մասնավոր սեփականության պաշտպան էլին կանգնած թե կրոնը, թե պետությունը և թե հասարակական կարծիքը: Յուրաքանչյուր գող համարվում

եր ամենաարեւմտեան արարածը վորը պատժուում էր բուրժուական որենքները բոլոր խստութեամբ: Մենատեսեսը մեղք էր համարում, հան անք էր համարում հաց գողանալ, ուրիշի ինչքը վերցնել: Իսկ այժմ յերբ այդ գույքը դարձավ հասարակական, կոլտնտեսային, նա թքել է այդ սեփականութեան վրա: Ընդհակառակը, կուլակը կարողացավ այնպես բացատրել, այնպես ոժանդակել մանր-սեփականատիրական տրամադրութեանների սանձարձակութեան, վոր հափշտակութեանը դարձավ վոչ միայն մասսայական, այլ և համարյա տարբերային յերևույթ: Կոլտնտեսութեանների մասսաներում մենք չենք տեսնում դիմադրութեան այդ յերևույթին: Կոլտնտեսականը, վերադառնալով դաշտից, վերցնում է սեկ քառորդ պարկ յեղիպտացորեն կամ մի քիչ ցորեն և դա նույնիսկ հանցանք չի համարվում: Իսկ չե՞ վոր դա ճանապարհ է դեպի կոլտնտեսութեան կործանումը: Յեթե իսկապես ստեղծվեր այնպիսի դրութեան, վոր բերքը հափշտակվեր, ապա իհարկե վոչ մի կոլտնտեսութեան չեր կարող գոյութեան ունենալ: Այս պատճառով կուլակութեան ու նրա մնացորդների ամբողջ գասակարգային ենթադրանք այժմ նպատակ ունի սանձարձակել այդ մանր սեփականատիրական տարերքը, կազմակերպել նրան՝ հացը հափշտակելու և հացամթերումներին դիմադրելու համար:

Կոլտնտեսութեանների հացը չի վատնվում միայն այդ բազմաթիվ կենցաղային բնույթ ստացած մանր հափշտակումներով, վոր կատարում են առանձին կոլտնտեսականները և անհատականները, թեպետ այդ հափշտակումներն ամբողջովին վերցրած, շատ խոշոր մեծութեան են կազմում և ամենալուրջ վտանգ հանդիսանում: Կան տասնյակ և հարյուրավոր դեպքեր, յերբ հենց կոլտնտեսութեանների վարչութեանները, «կոմունիստների» գլխավորութեամբ, հափշտակում են կոլտնտեսութեան հացը: Որինակի համար, Կրասնոդարի ռայոնի Նովո-Տիտոբսկի ստանիցայում կոլտնտեսութեան վարչութեանը, զբլխավորութեամբ կարմիր դրոշի շքանշան ունեցող և պարտիզան-կոմունիստի, կազմակերպից հացի զազանի հափշտակութեան: Կան դեպքեր, յերբ վարչութեան անդամը նախորդ ցուցմունք է տալիս շտեմարանը կառուցել այնպես, վոր կարելի լինի հացի կեսը թաղցնել ու հետո հափշտակել:

Մրա հետ կապված են պետութեանը խաբելու, կոլտնտեսութեան իսկական դրութեանը նրանից ծածկելու փորձերը: Լենինն ասում էր, վոր «սոցիալիզմը—դա հաշվառք է»:

Բայց անհ կոլտնտեսութեանները, մի շարք կոլտնտեսութեաններ, մանավանդ Կուբանի ռայոններում, անկասկած դիտակցորեն խաբում են պետութեանը, թաղցնում են հացը, ունեն յերկու տեսակ հաշվապահութեան: Մեկ հաշվապահութեանն իրենց համար է, վորի

մեջ մտնում է թե առաջին, թե յերկրորդ և թե յերրորդ տեսակի հացը և հաշվի յեն առնված բոլոր հնարավորութեանները: Յերկրորդ հաշվապահութեանը պետութեան համար է, վորի համաձայն մթերութեանների համար վոչինչ չի մնում: Այդ բոլորն արվում է նրա համար, վոր ցանքերի տարածութեանը պակաս ցույց տրվի, վոր ապացուցվի, թե ավելի շատ ցանքեր են փչացել, քան իսկապես վոր կա, բերքը յեղածից պակաս ցույց տրվի: Ահա այն ճանապարհները, վորոնցով դասակարգային թշնամին,—կուլակութեանը,—կուբանում կազմակերպում է սարտաժ ընդդեմ կուսակցութեան ու կառավարութեան միջոցառումների, կազմակերպում է ցանքի ու հացամթերումներին—տնտեսական վճռական կամպանիաների վիժեցումը:

Կասկածից դուրս է, վոր կուլակութեանը խորհրդային իշխանութեան կողմից զիջում, թուլութեան համարեց այն միջոցառումներն, այն արտոնութեանները, վորոնք վերջին ժամանակներս տրվեցին կոլտնտեսութեաններին, կոլտնտեսականներին և աշխատավոր սենատնտեսներին,—կոլտնտեսային առևտրի թուլութեանը, վոր նշանակում է, թե կարելի չէ արտադրանքի մի մասը ծախել պետական դեներից ավելի բարձր դեներով և դրանով խոշոր չափով ավելացնել կոլտնտեսութեանների և կոլտնտեսականների դրամական ռեսուրսները,—հացի, մսի մթերումների պլանի կրճատումը, վորի նպատակն է բարձրացնել յուրաքանչյուր առանձին կոլտնտեսականի և աշխատավոր մենատնտեսի անձնական անասնապահութեանը և ագարակամերձ տնտեսութեանը: Յեվ կուլակութեանը վորոշեց ճնշման փորձ անել: Քանի վոր խորհրդային իշխանութեանը թույլ է—մտածում է կուլակութեանը,—ճնշեք, կազմակերպեք սարտաժ, չցանենք, հաց չծախենք պետութեան, ստիպենք քաղաքին, բանվորներին քաղցած մնալ, դուցե ելի զիջումներ կորդենք, դուցե փորձենք, թե վորքան ավել է խորհրդային իշխանութեանը, արդյոք կգիտանա՞ այդ սարտաժին, թե վոչ: Ահա այժմյան գասակարգային պայքարի մեխանիկան:

Պարզ է, վոր մենք պետք է ջախջախենք և կջախջախենք այդ սարտաժը, գասակարգային թշնամու այդ փորձերը: Դրանումն է հիմնական քաղաքական իմաստը: Այդ նպատակն են հետապնդում բոլոր վորոշումները, վորոնց մասին խոսվեց:

Մեղ կարող են ասել, վոր վերջին վորոշումներում նշված միջոցառումները չափազանց խիստ են, վոր իբր թե նրանք ցույց են տալիս ինչ վոր մի նոր կուսակցական գիծ՝ կոլտնտեսութեանների և անհատականների վերաբերմամբ, վոր իբր թե այստեղ չկա անմիջական կապակցութեան այն բոլոր վորոշումների հետ, վորոնք վերջին ժամանակներս կուսակցութեանն ընդունել է կոլտնտեսութեանների ու

մենատնտեսությունների վերաբերմամբ: Իս բացարձակապես սխալ է. Իս նույնպես դասակարգային թշնամու փորձ է՝ վարկաբեկել մեր կուսակազմակերպության վորոշումները:

Յեթե յերկրամասի դրությունը հասկանալ այնպես, ինչպես վոր կա, ինչպես մի դրություն, յերբ կուլակը կարողացավ կուբանի ռայոններում կազմակերպել կուսակցության ու խորհրդային իշխանության միջոցառումների սարսուռ, կարողացավ դրա համար ոգտապործել կուտնտեսականների մանր-սեփականատիրական, մանր-բուրժուական տրամագրությունները, վորոնք դեռ չեն վերացվել կուտնտեսություններում,— ապա կուսակցության ճիշտ գիծը հենց նրանումն է կայանում, վոր հաստատորեն կիրառվեն այնպիսի միջոցառումներ, վորոնք մենք շատ անգամ կիրառել ենք մեր դեմ դուրս յեկամ դասակարգային թշնամու վերաբերմամբ: 17-րդ կուսկոնֆերանսն ասաց, վոր յերկրորդ հնդամյակում, մտապա ժամանակաշրջանում անխուսափելի յի դասակարգային պայքարի սրումը առանձին ժամանակամիջոցներում, առանձին ռայոններում, շինարարութայն առանձին ճակատամասերում: 17-րդ կուսկոնֆերանսն ասաց, վոր դասակարգային թշնամու դիմադրությունը պիտի արտացոլի թե դյուղում և թե քաղաքում աշխատավորների առանձին միջնաշերտերի տատանումները և վոր բանվոր դասակարգը պետք է ամենավճուղական հակահարված տա դասակարգային թշնամու նման փորձերին: Այն բոլոր միջոցառումները, վորոնք նշված են կենտկոմի ներկայացուցիչների մասնակցութայմբ Յերկրկոմի վորոշումներում և դրան մասին կենտկոմի ու ԿՎՀ վորոշման մեջ— հենց այն միջոցառումներն են, վորոնցով մենք պետք է ջախջախենք ակտիվացած դասակարգային թշնամու դիմադրությունը, ջախջախենք կուլակութայն կազմակերպած սարսուռը:

Մի՞թե սխալ է, յերբ մենք վորոշում ենք արդյունաբերական ապրանքներ չտալ այն ստանիցաներին, այն մենատնտեսներին, կուտնտեսություններին, կուտնտեսականներին, վորոնք չեն կատարում հացամթերումների պլանը, վորոնք նույն Պոլտավսկայա և Մեդվեդովսկայա ստանիցաների նման պետութայնը տալիս են մեկ հեկտարից 1—1½ փութ հաց, իսկ մնացածը կամ հափշտակում են, կամ ոգտապործում են իրենց կարիքների համար:

Իս բացարձակապես արդարացի յի բանվոր դասակարգի վերաբերմամբ, վորն արտադրում է այդ ապրանքները, վորին հաց է հարկավոր այդ ապրանքներն արտադրելու համար: Իս ք գիտեք, վոր մենք առաջ ել այդ միջոցները կիրառում եյինք:

Իսկ կուտնտեսային առևտրի արգելումն այն ստանիցաներում, վորոնք սե տախտակին են հանված, մի՞թե սա ևս չի բղխում իրերը ճիշտ հասկանալուց: Խորհրդային իշխանությունը հենց կուտնտեսային

շինարարութայն հաջողությունների և ամրապնդման հիմունքով թույլ տվեց կուտնտեսություններին առևտուր անել, թույլ տվեց ստանալ դրամական լրացուցիչ միջոցներ: Իսկ յեթե տվյալ կուտնտեսությունը՝ ստանիցան չի ցանում, յեթե նա հացը չի հանձնում, ինչու նրանց թույլ տալ առևտուր անել: Մի՞թե սխալ է, յերբ խորհրդային իշխանությունն այդպիսի ստանիցայից յետ կառնե տված արտոնությունը և ցույց կտա, վոր ինքը բավականաչափ ուժեղ է՝ սարսուռով իրեն վախեցնելը թույլ չտալու համար:

Մենք ուղղակի հայտաբարեցինք, վոր հյուսիսային յերկրամասերը կաքսորենք չարամիտ սարսուռիկներին, կուլակի զուռնայով պարողներին, վորոնք չեն ուզում ցանել: Սակայն մի՞թե մենք նույն կուբանից կուլակային հակահեղափոխական տարրերին չեյինք աքսորում անցյալ տարիներում: Աքսորում եյինք, այն էլ բավականաչափ թվով: Յեվ այժմ, յերբ կուլակութայն մնացորդները փորձում են սարսուռ կազմակերպել, դուրս են գալիս խորհրդային իշխանութայն պահանջների դեմ, ավելի ճիշտ կլինի Կուբանի արգավանդ հողը տալ այն կուտնտեսականներին, վորոնք քիչ հողի վրա յեն աշխատում, վորոնք գտնվում են վատ հողի վրա ուրիշ յերկրամասերում: Նրանք վոր միայն ամենալավ կերպով կմշակեն, այլ և կհամբուրեն Կուբանի հողը: Իսկ նրանց, վորոնք չեն ցանկանում աշխատել, վորոնք աղտեղում են մեր հողը, կաքսորենք ուրիշ տեղեր: Իս արդարացի յի: Մեղ կարող են ասել. «Այդ ինչպես է, վոր առաջ կուլակին եյին աքսորում, իսկ այժմ խոսքն ամբողջ ստանիցայի մասին է, այնտեղ կան և կուտնտեսություններ և բարեխիղճ անհատականներ, ինչպես կլինի»: Այո, մեռնում է հարցը դեռ ամբողջ ստանիցայի մասին, վորովհետև կուտնտեսությունները, կուտնտեսականները, իսկապես բարեխիղճ մենատնտեսներն այժմայն պայմաններում պատասխանատու յեն իրենց հարեանների դրութայն համար: Ել խորհրդային իշխանութայն ինչ հենարան է այն կուտնտեսությունը, վորի կողքին մի ուրիշ կուտնտեսություն կամ անհատական տնտեսությունների մի ամբողջ թումբ դուրս է գալիս խորհրդային իշխանութայն միջոցառումների դեմ: Ել ինչ հենարան է նա, վորը չի փորձում արագ և վճռականապես ջախջախել և չի ջախջախում նրանց դիմադրությունը: Մենք պահանջում ենք, յեթե այնտեղ իսկապես կան խորհրդային իշխանութայնն ու կուտնտեսություններին հավատարիմ տարրեր, թող մեղ հետ միասին անմիջապես ջախջախեն սարսուռով, վորը կազմակերպել է կուլակությունը,— և ուղղեն դրությունը. այն ժամանակ աքսորման հարց չի լինի:

Հասարակական, սոցիալիստական—պետական, կուտնտեսային սեփականութայն հափշտակումների դեմ պայքարելու միջոցներ ձեռնարկել— մի՞թե սա մի վորե է նոր բան է մեզ համար: Մի՞թե սա ամբողջ

Նովին չի բղխում մեր կուսակցութեան գլխավոր գծից: Այժմ առանձնապես պարզ ու ակներև ե այս հարցի վերաբերյալ կառավարութեան ղեկընտի հսկայական նշանակութունը, ղեկընտի, վորի նպատակն է հաղթահարել մանր-սեփականատերական հողերանութեան այն ֆնացորդները, վորով մասնավոր, անձնական սեփականութունը համարվում է սրբազան, իսկ հասարակականը վոչ: Յեվ սրանով այդ ֆնացորդները քայքայում են կոլտնտեսութունները, թուլացնում են պետութունը, կուլակի համար հնարավորութուն են ստեղծում սաբոտաժ կազմակերպել ընդդեմ ցանքի, ընդդեմ հացամթերումների, փորձել սովի յեթաբեկել բանվորներին: Յեվ հենց այժմ ամեն մեկի համար պարզ է մեր հենտկոմի, ընկ. Ստալինի այդ հանձարեղ նախատեսումը, ընկ. Ստալինի, վորը դրեց այդ հարցը, հսկայական նշանակութուն ունեցող նախատեսում, պայքար հասարակական սեփականութեան համար, նրա համար, վոր այդ հասարակական սեփականութունը դառնա նույնպես սրբազան, նույնպես անձեռնմխելի, ինչպես յեղել է, գոնե մասնավոր սեփականութունը բուրժուական աշխարհի համար:

Այս պատճառով սոցիալական պաշտպանութեան առավելագույն միջոցի գործադրութունը այդ ղեկընտը խախտողների դեմ, նրա գործադրութունն այն տարրերի դեմ, վորոնք անկասկած կուլակային գործ են կատարում, փորձելով վիժեցնել ու քայքայել մեր կոլտնտեսութունները,—միանգամայն որինական է: Խորհրդային իշխանութեան, սոցիալիստական շինարարութեան համար պայքարելիս, մենք չենք հրաժարվել այդպիսի միջոցից: Իսկ այժմ հրապարակել վրձ յե կուլակութեան կազմակերպած սաբոտաժը, մի սաբոտաժ, վորն ուղղված է գյուղատնտեսական վճռական կամպանիաների դեմ: Խնդիրը վերաբերում է չափազանց կարևոր, չափազանց կենսական յերևույթներին: Իսկապես, հենտկոմը մեր հացամթերումների պլանն անցյալ տարվա համեմատութամբ կրճատեց 75 միլիոն փթով: Անցյալ տարի մենք մթերեցինք ճիշտ 200 միլիոն փութ, իսկ այս տարի մեր պլանը 125 միլիոն փութ է: Մի շարք ռայոններում, անցյալ տարվա համեմատութամբ, բերքը մի քիչ ցածր է, սակայն պլանն էլ այնքան դաշի չափով է կրճատված, վոր անշուշտ, ինչ վոր այժմ պիտի մթերել, այդ ծանր պլանն է: Մինչդեռ մենք մթերել ենք այդ պլանի 50 տոկոսը միայն, իսկ Կուբանում ավելի քիչ:

Մինչև այսօր մենք ցանել ենք 3 միլիոն 100 հազար հեկտար, մինչդեռ անցյալ տարի մինչև նույն օրը ցանել էյինք 4,500 հազար հեկտար աշնանացան: Կուլակութեան կազմակերպած սաբոտաժը պարզ արտահայտվում է այդ թվերով:

Մեզ կարող են ասել, վոր այնուամենայնիվ այդ բոլոր միջոցառումները կդիպչեն կոլտնտեսականներին, չքավորներին, միջակներին,

բասարակներին, կղիպչեն կոմունիստներին: Հապա ինչպես: Մթերենք յերբևե հրաժարվել ենք պայքարել նրանց դեմ, ովքեր սոցիալական գրութեամբ մոտիկ լինելով մեզ, դուրս են յեկել մեր դեմ: Մթերենք մեզանում չի յեղել այնպիսի գրութուն, յերբ առանձին գործարաններ տվել են ամբողջ գնդերով սպիտակ-զվարդիականներ, վորոնց մենք շարդել ենք: Միթե մեզանում չի յեղել Կոնշտաղը, վորտեղ գեներալներին, եսերներին կողմից խափված, դժվարութունների հանդեպ նահանջած բանվորների, նավաստիների մի մասը դուրս յեկավ խորհրդային իշխանութեան դեմ: Միթե մեր կուսակցութունը այնտեղ չուղարկեց կուսակցական համագումարի մի մասը, այդ հակահեղափոխութունը շարդելու համար:

Ահա թե ինչու այդ բոլոր միջոցառումները, վորոնք մենք կիրառում ենք վորպես մի վճռական հարված՝ Կուբանում կուլակութեան կազմակերպած սաբոտաժի դեմ, այդ բոլոր միջոցները, մեր բոլոր կյանքի միջոցները անխուսափելի յեն դասակարգային պայքարի ընթացքում յերբ թշնամին փորձում է պայքարել մեր դեմ: Այդ միջոցներն ամբողջովին և լիակատար չափով բղխում են այն պայմաններից, այն խնդիրներից, վորոնք այժմ դրված են մեր առաջ:

Սակայն բանը միայն խստութունների մեջ չէ: Մեզանում, ստանիցաներում, նույնիսկ յեթե սրանք սև տախտակին են հանված, կոլտնտեսութուններում կա հենարան, կան մարդիկ, վորոնք մոտիկ են կուսակցութեան, միանգամայն հավատարիմ են խորհրդային իշխանութեան իսկապես պայքարում են կոլտնտեսութունների ամրապնդման համար:

Մենք դիտենք, վոր կգտնվեն մարդիկ, թե կուսակցութունից դուրս և թե նրա ներսում, վորոնք կփորձեն Կուբանում կուլակութեան կազմակերպած սաբոտաժի հաջողութունը մեկնաբանել իբրև կոլտնտեսութունների վիժում և կործանում: Նրանք կփորձեն ապացուցել, վոր բոլոր կոլտնտեսականները ծուլեր են, գողեր և վոր կոդեկտիվացման վերաբերյալ կուսակցութեան ամբողջ քաղաքականութունը, այն ամբողջ մեծ գործը, վոր վերջին տարիներում կատարեցին կուսակցութունն ու բանվոր դասակարգը,—այդ բոլորը սխալ է յեղել: Նրանք կապացուցեն, թե կոլտնտեսութունները պետք է ցրել, խորհունտեսութունները վերացնել, աղջունաբերութունը կոնցեսիայով տալ և մեղսորդն դնալ դեպի կապիտալիզմը, ինչպես այդ ասում էր Ռյուտինի հակահեղափոխական, սպիտակ-զվարդիական խմբակը՝ կուսակցութեան նախկին անդամներից և սրանց հարող անկուսակցականներին բաղկացած: Վոչ միայն իսկական սպիտակ-զվարդիականները, այլ և բոլոր նրանք, վորոնք կապ ունեն աղբի, տրոցկիստների հետ, այժմ պետք է հրճվեն այն ամենի առթիվ, ինչ վոր մենք բացահայտ և ուղղակի կերպով հրապարակում ենք մեր մամուլում:

Իսկ մինք զիտենք և սրանում վասա՛ ենք, վոր մեր կոյտնտեսու-
թյունները, նույնիսկ Կուբանում՝ վերջնականապես ամրապնդվել են,
Մենք զիտենք, վոր թե այժմ և թե նախընթաց ժամանակաշրջանում,
մեր կոյտնտեսություններից դուրս յեկողներ չեն լինում: Նույնիսկ զա-
սակարգային թշնամին, վորն անմիջականորեն աշխատում է կոյտնտե-
սության մեջ, ստանիցայում, չի համարձակվում ագիտացիա մղել կու-
տնտեսությունից դուրս գալու համար, քանի վոր նա գետե, թե այդ
դործն անհուսալի յե: Նա փորձում է ուրիշ ճանապարհով կործանել
կոյտնտեսությունը, փորձում է քայքայել նրա տնտեսությունը, վիժե-
ցնել աշխատանքային դիսցիպլինան, հափշտակել գույթը և այլն ու
այդպիսով պայթեցնել կոյտնտեսությունը: Սակայն կոյտնտեսություն-
ները վերջականապես և հաստատորեն ճանաչված են աշխատավոր
գյուղացիության կողմից:

Մենք զիտենք, վոր վոչ բոլոր կոյտնտեսային գյուղացիությունն
և հացը գոզանում: Միայն ամենավատ մասը—ծուլերը, հետամնաց ու
խաբված կոյտնտեսականների մի մասն է մասնակցում դրան: Կոյտն-
տեսությունների մեծամասնության մեջ մենք ունենք այնպիսի կու-
տնտեսականների հաստատուն միջուկ, վորոնք հավատարիմ են կուսակ-
ցության, հավատարիմ են կոյտնտեսության, մարդիկ, վորոնք իսկապես
չանդիսանում են խորհրդային իշխանության իսկական հենարանը,
մարդիկ, վորոնք անցել են քաղաքացիական կռիվները, կոփվել են
կռիվատիրացման համար և կուլակի դեմ մղված պայքարում, մարդիկ,
վորոնք այժմ աշխատում են անձնագոհաբար և կատարում են իրենց
պարտավորությունները պետության հանդեպ:

Հարցը նրանումն է, վոր պետք է կարողանալ բարձրացնել կոյտնտե-
սականների հենց այդ մասի ակտիվությունը, հանել նրանց ծուլերի,
գողերի դեմ, վորոնք փորձում են ապրել նրանց հաշվին, գողանալ
նրանց կոյտնտեսային բարիքը: Հարցը նրանումն է, վոր պետք է կա-
րողանալ, հենվելով նրանց վրա, ջախջախել կուլակության կազմա-
կերպած սաբոտաժը, մինչև վերջը ջախջախել այդ կուլակային տարրերը
և այդպիսով ամրապնդել մեր կոյտնտեսությունները:

Պետք է ուղղակի ասել, վոր մեզանում կոյտնտեսային ակտիվի-
տանք չի կատարվել: Մենք բացառապես զբաղվել ենք տնտեսությամբ,
թվերով և մի փոքր մոռացել ենք այն քաղաքական ուժի կազմակերպ-
ման մասին, վորը պետք է ապահովե կոյտնտեսությունները ղեկա-
վարելու հնարավորությունը: Հետևանքն այն և յեղել, վոր ղեկավար
կազմակերպություններն անկասկած կտրվել են կոյտնտեսային մաս-
այից, բացակայել է այն փոխադարձ գործողությունը կոյտնտեսա-
կանների և կուսակցական, խորհրդային ու կոյտնտեսային մասսայի

միջև, առանց վորի չի կարող ամրապնդվել կոյտնտեսությունը: Յես
խոսում եմ այն մասսայական աշխատանքի մասին, վորը չի սահմանա-
փակվում զեկուցումներով և ինֆորմացիաներով, այլ պետք է բովան-
դակել կոյտնտեսության ամբողջ ընթացիկ աշխատանքը, վորը անխը-
զեվորեն կապված է կոյտնտեսականների լավագույն մասին՝ վորպես
ակտիվ կազմակերպելու հետ, նրան կոյտնտեսության ամենորյա ամ-
բողջ աշխատանքին ներգրավելու հետ: Միայն այսպիսի մասսայական
աշխատանքի բացակայությամբ պիտի բացատրել Կուբանում կուլակա-
յին ազդեցության հաջողությունները, գողացված հացը հայտնաբե-
րելու և աշխատանքի դիսցիպլինան ամրապնդելու դժվարությունները:

Պարզ է, վոր գործն առաջին հերթին ընկնում է մեր գյուղական
կուսակազմակերպության վրա, կախված է նրա բուլշևիկյան մարտունա-
կությունից, նրանից, թե վորչափ կուսկազմակերպությունը կկարողա-
նա կազմակերպել կոյտնտեսային ակտիվն ու կոյտնտեսականների ամ-
բողջ մասսան, հանել նրանց կուլակային տրամադրությունների, մանր
բուժօժանկան տարերքի դեմ, վորն իրեն զգալ է սալիս կոյտնտեսու-
թյուններում: Իսկ մեր կուսկազմակերպությունների շարքերում, մանա-
վանդ գյուղական կուսկազմակերպությունների շարքերում—դեռ ևս
կան կուսակցության շատ անդամներ, վորոնք վոչ միայն անընդունակ
են հակահարված տալ այդ տարերքին, այլ և ուղղակի անցնում են
դասակարգային թշնամու դիրքերը, հաճախ կուլակության հետ կազ-
մակերպում են ու դիվալորում հենց այն սաբոտաժը, վորի մասին
խոսվում է: Չե՞ վոր հուշակավոր դարձած Կոտոյի որինակը ցույց է
տալիս, թե ինչպես ստանիցայի բլիշի քարտուղարը հավաքում է կու-
տնտեսականներին, նրանց հետ պայմանավորվում է խաբել պետու-
թյանը, կոյտնտեսականներին մեկ կիլոգրամի փոխարեն աշխորվա հա-
մարտալ յերկու կիլոգրամ հաց և գրանցել մեկ կիլոգրամ և նախազ-
գուշացնում է, վոր յեթե մեկն ու մեկ այդ մասին խոսք թոցնե իր
բերանից, «կգնդակհարենք»: Իս լիակատար և վերջնական այլասեռում
է, լիակատար և վերջնական անցում է դեպի դասակարգային
թշնամու կողմը, դա ուղղակի հակահեղափոխություն է, վորի համար
կոտոյվը կգնդակահարվի՝ դատարանի վճռի համաձայն:

Մյայրիսի դեպքերը յեղակի չեն: Մենք նույնիսկ դեպքեր գի-
տենք նաև ուրիշ ստանիցաներում, մենք ունենք ուրիշ փաստեր, յերբ
բլիշները քարտուղարներն իրենք են հացը թագցնում ու գողա-
նում: Յեթե կոմունիստը գողանում է հացը, դա առանձնահատուկ
նշանակութուն ունի, քանի վոր մնացած կոյտնտեսականները, մնա-
ցած գյուղացիները, վորոնք կոմունիստի վրա նայում են ինչպես իշ-
խանութեան ներկայացուցիչի, ինչպես ղեկավար կուսակցության ներկա-
յացուցիչ վրա, գողությունը կհամարեն որինական:

Մենք կարծում ենք, վոր կուսակցութեանից դուրս գտնվող թշնամին ազելի սակավ է վտանգավոր, քան այն թշնամին, վոր գտնվում է մեր կուսակցութեան մեջ: Դուք գիտեք, վոր յեթե մենք մարդկանց գեպի կոխվ ենք առաջնորդում, ապա մեզ համար ամենամեծ վտանգ կլինի այն ժամանակ, յեթե այդ շոկատի մի մասը դավաճանի վճռական ըուպեյին, յեթե, որինակ, 500 մարտիկներից 200-ը դասալիքներ լինեն: Հարկավ, այդ դեպքում մենք վոչ միայն չենք ջարդի թշնամուն,—մինչդեռ մենք ուզում ենք ջարդել հարձակման անցնելով,—այլ ընդհակառակը, կկորցնենք և մնացած մասը:

Կուսակցական կազմակերպութեան վերաբերմամբ նույնը պիտի ստել: Յերբ մենք հարձակման ենք անցնում, կազմակերպում ենք, կառուցում, ազելի լավ է, վոր մենք լինենք քիչ, միայն թե մեր շարքերը լինեն ամուր, բաղկանան կոփված բուլշեիկներից, վոր մենք հաստատ վստահ լինենք նրանց վերաբերմամբ՝ վորոնց հետ կոխվ ենք գնում: Ահա թե ինչու մեր շարքերում դավաճաններն ամենամեծ վտանգն են ներկայացնում: Յեվ այն, ինչ վոր մենք տեսնում ենք հանձինս Կոտովի, հանձինս տասնյակ կոմունիստների, վորոնք դավաճանում են կուսակցութեանը, չի կարող և չպետք է հետագայում տեղ ունենա մեր կազմակերպութեան մեջ:

Մի քանիսները կարող են ասել—հանցեք կուսակցութեանից, ինչո՞ւ աքսորել կոմունիստներին, վորոնք հանված են կուսակցութեանից իբրև սոցիալապես վտանգավորներ: Սա ճիշտ չէ, ընկերներ: Մենք վոչ միայն աքսորում, այլ և զնդակահարում եյինք այն կոմունիստներին, վորոնք դավաճանում կամ անփութանում եյին, ասենք, քաղաքացիական պատերազմի ժամանակ: Յերբեմն գուցե նրանք վատ մարդիկ չեն յեղել, բայց մենք նրանց զնդակահարում եյինք, քանի վոր զրանք բանվոր դասակարգի գործի ամենավտանգավոր դավաճաններն եյին: Այս պատճառով բուրժուվին ճիշտ է, վոր այժմ, յերբ դրութեանը բավական լուրջ է, յերբ խնդիրը վերաբերում է ցանքին, հացին, կոլտնտեսութեանըներին, մենք ուղղակի և բացահայտ ասում ենք, վոր մենք այսպիսի մոմենտում կուսակցութեան գործին դավաճանող կոմունիստներին պիտի աքսորենք յերկրամասից՝ կուլակների հետ միասին, քանի վոր նրանք եյապես անում են նույնը, ինչ վոր կուլակները: Վոչ մի տարբերութեան չկա:

Մեզանում, գյուղում դեռ կան զգալի թվով կոմունիստներ, վորոնք կորցրել են իրենց վտաքի տակի ամուր հողը, յերկրի մի յին դարձել կուսակցութեան և կոլտնտեսութեան միջև և նրանց վրա կոլտնտեսային մասսայի ճնշումն այնքան մեծ է, վոր նրանք կորցնում են իրենց կուսակցական դեմքը: Այդ հասկանալու համար պետք է հիշել, վոր մենք գյուղում այժմ գործ ունենք կոլտնտեսութեանների հետ:

Հաճախ այդպիսի կոմունիստը սոցիալիստական ձեռի կոլտնտեսութեան կողքին չի կարողանում տեսնել, չի կարողանում հայտնաբերել սոցիալական կուլակային գործերը: Կոլտնտեսային այդ արտաքին յերևույթի հետևում չեն տեսնում այն սարսափը, վոր կազմակերպում է կուլակը: Այսպիսի դեպքերում նա, իբր թե պաշտպանելով կոլտնտեսութեանը, հաճախ իրադործում է կուլակային քաղաքականութեանը: Կոմունիստ կոլտնտեսականը, կոլտնտեսութեան ղեկավարը, վորը կառուցել է այդ կոլտնտեսութեանը, վորն իր ժամանակին պայքարել է այդ կոլտնտեսութեան համար, ներփակվելով կոլտնտեսութեան շրջանակներում, յենթարկվելով կոլտնտեսականների մանր-սեփականատիրական արամադրութեաններին, հաճախ դառնում է կուլակի զերին, մանավանդ յեթե քաղաքականապես թույլ գրադետ է, յեթե բավականաչափ գյուղի չի հանում շրջապատի քաղաքական գրութունից: Հետևանքն այն յեղավ, վոր թուլացավ մեր գյուղական կուսակցակերպութեանների մարտունակութեանը:


Նույնիսկ այժմ, կուսակցութեան Յերկրային ու Կենտրոնական կոմիտեաների վորոշումներից հետո, չի նկատվում այն մարտական տրամադրութեանը, դասակարգային թշնամու դիմադրութեանը խորտակելու, նրա կազմակերպած սարսափը խորտակելու այն բուլշեիկյան վճռականութեանը, վորն անհրաժեշտ է Բայց չե՞ վոր, յեթե վոչ ամեն ինչ գոնե չափազանց շատ բան է կախված նրանից, թե վորչափ մարտունակ է կուսակցական կազմակերպութեանը:

Վերջին 2—3 տարիներում մեր գյուղական կուսակցակերպութեանը աճել է յերկու և կես անգամ, մոտավորապես 50—60 հազարից մինչև 115—120 հազար: Պարզ է, վոր կոլեկտիվացման վերելքի ժամանակ կազմակերպութեանների մեջ մտան քիչ ստուգված, անկայուն տարբեր, վորոնք վերելքի ժամանակ մտան կուսակցութեան, հետո անընդունակ յեղան պայքարելու դժվարութեանների դեմ, մի մասն է այդ ժամանակ ուղղակի խցկվեց կուսակցութեան մեջ:

Ահա թե ինչու բղխում է այն հարցը, վոր մենք պետք է լուրջ, շատ լուրջ ստուգենք մեր կուսակցական շարքերը: Մենք պետք է զտենք բոլոր նրանց, վորոնք պարզապես դավաճանել են, բուրժուարներ, ով անընդունակ է յեղել պայքարել ամյալ ետապում կուսակցութեան վորոշումների համար:

Դուք գիտեք, վոր արդեն կատարվում է մեր գյուղական կուսակցակերպութեանների գտումը: Վերջինս պիտի կատարվի բոլոր բնիշններում, բոլոր ուայոններում, այնպես, վոր այդ աշխատանքը կատարվի իբրև քաղաքական մի մեծ կամպանիա, վորը մեզ կոզնի գորահավաքել մեր կազմակերպութեանը՝ խորտակելու սարսափը ջախջախելու:

ДНО
И СТИТУ
ВОСТОКОВЕДЕН
1930
СССР



յու համար, կոգնի մեզ ամբապնդելու մեր կոլտնտեսութունները, կոգ-
նի մեզ ամբապնդել և համախմբել մեր կուսակցական շարքերը: Այս
միջոցը միանշամայն անհրաժեշտ միջոց է, վորը մենք գործադրում ենք՝
յերբ մեզ հարկավոր է լինում ամբապնդել մեր կուսակցական շարքերը:
Ստույով կուսակցակերպության մասին, չի կարելի չխոսել նաև
կուսակցության Յերկրային Կոմիտեյի մասին: Հարկավ, կուսակցու-
թյան Յերկրկումը պատասխանատու յե յերկրամասի գործերի և կազ-
մակերպութունների դրության համար:

Այն հանգամանքը, վոր կուլակը կարողացավ սարսուժ կազմա-
կերպել Կուբանի ռայոններում, ցույց է տալիս, վոր մենք, կուսակա-
մակերպության ղեկավարութունը չկարողացանք այնպես պայքարել
կոլտնտեսութունների կազմակերպչական տնտեսական ամբապնդման
համար, վորպեսզի իսկպես համախմբենք կոլտնտեսականներին, վոր-
պեսզի իրոք ամբապնդենք կոլտնտեսութունները, այնպես, վոր կու-
լակային ագիտացիան, կուլակային փորձերը վոչ մի հող, վոչ մի հնա-
րավորութուն չգտնեն այս սարսուժը կազմակերպելու համար: Պարզ
է, վոր այս ուղղությամբ մենք բավականաչափ չենք աշխատել և դյու-
րասնտեսութունն ու կոլտնտեսութունները չենք վարել այնպես,
ինչպես հարկավոր է: Յես կարծում եմ, վոր մենք բավականաչափ իր
ժամանակին հաշվի չառինք այն, վոր անհրաժեշտ է անցնել կուլա-
կության կազմակերպած դիմադրության ու սաբոտաժի խորտակման,
չկարողացանք այդ գործը կազմակերպել մարտականորեն, այնպես, վոր
մի անգամից, հենց անոթին քայլերից փշրենք կուլակության դիմադրու-
թյունը ցանքին և հացամթերումներին: Կենտկումը մեզ ողնեց, վորպեսզի
իրքը բոլշևիկորեն կազմակերպելնք այն բոլոր միջոցառումները, վո-
րոնք այժմ մենք կիրառում ենք այդ սաբոտաժը ջախջախելու համար:

Մենք պետք է սրանից համապատասխան յեղրակացութուններ
հանենք, ամենից առաջ այն իմաստով, վոր Կենտկումի հետ մեր նշած
միջոցառումները պետք է կիրառվեն բոլշևիկյան ամբողջ անհաշու-
թյամբ, բոլշևիկյան ամբողջ վճռականությամբ, այնպես, վոր ամենա-
կարճ ժամանակամիջոցում ուղղվեն թերությունները:

Կուլակության կազմակերպած սաբոտաժը ջախջախելուց հետո,
վորը մենք կկատարենք և դրանում վոչ մի կասկած չի կարող լինել,—
պետք է յերկար ու համառ աշխատենք մեր կոլտնտեսութուննե-
րում, շատ մեծ ուշադրութուն և ուժ գործադրենք նրանց ամբապնդելու
համար, դարձնելով նրանց այնպիսի խոշոր սոցիալիստական տնտեսու-
թյուններ, վորտեղ կուլակային վոչ մի ագիտացիա արձագանք չգտնի:

Պարզ է, վոր Կուբանի վերաբերյալ վորոշումներից պետք է
յեղրակացութուններ անեն վոչ միայն Կուբանի, այլ և յերկրամասի
մյուս ռայոնների կազմակերպութունները:

Համապատասխան յեղրակացութունների պիտի հանգեն նաև
քաղաքային կազմակերպութուններն, այն ել վոչ միայն այն տեսա-
կետից, վոր նրանք ավելի ևս մեծ չափով պիտի ողնեն գյուղում դր-
ված խնդիրների իրագործմանը: Վերջին ժամանակներս արդյունաբե-
րության մեջ դժվարութունների պատճառով մենք մի փոքր յերկրոր-
դական տեղ տվինք այն հարցերին, վորոնք կապված են քաղաքային
կազմակերպութունների կողմից գյուղին ողնելու հետ: Այժմ այս
բնագավառում պետք է առաջ բերել ուղղակի բեկում, այնպես, վոր
քաղաքի պրոլետարական կազմակերպութուններն ավելի մեծ ողնու-
թյուն հասցնեն թե մարդկանցով, թե շեֆության կարգով և թե մի
շարք ուրիշ միջոցառումներով, վորոնք կողնեն գյուղին, կնպաստեն
կոլտնտեսութունների ամբապնդման:

Այդ դեռ բավական չէ: Կասկածից դուրս է, վոր մանր բուրժուա-
կան տարրերի ախտիվացումը, կուլակության մնացորդների ախտիվա-
ցումը իր անդրադարձումը գտնում և պետք է գտնի նաև քաղաքում,
ձեռնարկութուններում: Չի կարելի մոռանալ, վոր ապակուլակացված
կուլակության մի վորոշ մասը, կոլեկտիվացումից դժգոհ մնացածների մի
զգալի մասը գնացել է ձեռնարկութունները և այնտեղից դեռ չի դավել:

Փաստ է, վոր վերջին ժամանակներս մեզանում վորոշ չափով
թուլացել է մեր բոլշևիկյան դրոշմը, յես կասելի՝ նույն իսկ ձեռնար-
կութունների կոմունիստական կազմակերպութունների ախտիվու-
թյունը: Մենք դիտենք մի շարք փաստեր, յերբ ձեռնարկութունների
առանձին կոմունիստներ ուղղակի պոչական վերաբերմունք են ցույց
տալիս դեպի հետամնաց տրամադրութունները, յերբեմն ել ուղղակի
յերկյուղ են հայտնաբերում դասակարգային թշնամու յերկյթին հա-
կահարված տալու: Այս բոլորը պահանջում է լրջորեն բարձրացնել
դասակարգային արթնությունը, բարձրացնել կոմունիստների քաղա-
քական ախտիվությունը, ամբապնդել կուսակցական դիսցիպլինան:

Անհրաժեշտ է ամենավճռական պայքար մղել մեր կուսակազմա-
կերպութուններում գտնվող այն անկայուն տարրերի—թե աջ ոպոր-
տունիստական և թե «ձախ» տարրերի դեմ, վորոնք յերբեք չեն հա-
վատացել կոլեկտիվացման, վորոնք դինաթափվում են դժվարութուն-
ների առաջ, կամ մտածում են ցատկել այդ դժվարութունների վրա-
յով, շեղվել դասակարգային պայքարից, վորոնք հույս ունեն սոցիա-
լիզմ կառուցել առանց դասակարգային պայքարի: Այս բոլոր տարրերն
անպայման ախտիվանում են: Հարկավոր է բոլշևիկյան ուժեղ հակա-
հարված տալ մեր կազմակերպության մեջ այդպիսի յերևույթներին:

Այն դժվարութունները, վորոնց մասին խոսվում է, ժամանակա-
վոր դժվարութուններ են, մասնակի բնույթ կրող դժվարութուններ,
վորոնց մենք հաղթահարում ենք: Վոչ մի կասկած չկա, վոր մենք կը-

Չախջախենք այն սաբոտաժը, վորի մասին խոսվում եւ կուսակցութեանը, վորը կարողացավ բանվոր դասակարգի հետ միասին խորտակել կապիտալիստական կարգերն ու իշխանութիւնն իր ձեռքը վերցնել, կարողացավ մեր յերկրում կառուցել մի բոլորովին նոր արդյունաբերութիւն, իրագործել ինդուստրացումը, իրագործել կոլեկտիվացումը — ամենազժվարը պրոլետարական հեղափոխութեան մեջ, — կարողացավ ցած ու ցրիվ մենատնտեսութիւնները համախմբել, վերածել խոշոր, կոլեկտիվ տնտեսութիւններին, — այդ կուսակցութեանը և մասնավորապէս մեր կազմակերպութեանը կկարողանա հաղթահարել նաև այս զժվարութիւնները: Սակայն դա պահանջում է համապատասխան լարվածութիւն, համապատասխան գոհեր և գործելու բոլշևիկյան վճռահանութիւն: Յեթե մենք կարողանանք զորահավաքել մեր կուսակազմակերպութիւնը, անկուսակցական բանվորներին ու կոլտնտեսականներին մի առ մի բացատրել մեր կիրառած միջոցառումների ելուցումները, նրանց քաղաքական իմաստը (իսկ շատերն այդ չեն հասկանում, շատերը կարծում են, թէ խնդիրը վերաբերում է միայն հացին, միջանի ավելորդ միլիոն փութ հացին, կամ ավելորդ հարյուր հազար հեկտար ցանքին), յեթե մենք կարողանանք բացատրել, վոր խնդիրը հեկտար ցանքին, յեթե մենք կարողանանք բացատրել, վոր խնդիրը վերաբերում է դասակարգային թշնամու յելույթին, սաբոտաժին, վորը կազմակերպել է կուլակութեանը, յեթե մենք կարողանանք ապարը կուլակութեանը վերաբերում է կոլտնտեսութիւնների հետագացումը, վոր խնդիրը վերաբերում է կոլտնտեսութիւնների հետագա վիճակին, վոր դասակարգային թշնամին փորձում է կազմակերպել ցանքերի տարածութիւնների կրճատումը, հացամթերումների կրճատումը, ուղում է սովով շողափել խորհրդային իշխանութիւնը, — ապա մենք կգտնենք բավականաչափ բոլշևիկյան վճռահանութիւն, բոլշևիկյան համատեղութիւն, մեր շարքերում ևս դիմադրութիւնը խորտակելու համար, կկարողանանք մեր շուրջը կազմակերպել կոլտնտեսային մասսաներին, կոլտնտեսային ակտիվին և նրանց օգնութեամբ ջախջախել կուլակի կազմակերպած սաբոտաժը: Այնուհետև համառ ու յերկարասև աշխատանքով կկարողանանք ապահովել կոլտնտեսութիւնների հետագա ամրապնդումը:

Այսպէս ուրեմն, մենք հանդիպում ենք նոր զժվարութիւնների, վորոնք նոր ետապում մզվող դասակարգային պայքարի զժվարութիւններ են: Սակայն մենք բոլշևիկներ չիլինք լինի, յեթե անփութանայինք դասակարգային թշնամու յելույթի հանդեպ: Յեթե մենք հաստատապէս գիտենք, վոր կուսակցութեան զլխավոր գծի ճշտութիւնը, մեր լենինյան կենսկոմի և կուսակցութեան առաջնորդ ընկ. Ստալինի բոլշևիկյան հասաատուն դեկավարութիւնը ապահովում են մեր վերջնական հաղթանակը (ծափահարութիւններ):

ՀԿ(Բ) ԿԵՆՏՐՈՆԻ 1932 ԹՎԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

Կուսակցութեան գուման վերաբերյալ 16-րդ կուսկոնֆերանսի վորոշման հիման վրա (1929 թ. ապրիլ) ՀԿ(Բ)Կ կենտկոմը վորոշում է՝
 1) 1933 թվականի ընթացքում կատարել կուսակցութեան անդամների և թեկնածուների դտում:
 2) Այս վորոշումը հրապարակելու որվանից ամբողջ ԽՍՀՄ-ում, թէ քաղաքներում և թէ գյուղերում դադարեցնել թեկնածուների և անդամների ընդունելութիւնը:

ՀԿ(Բ)Կ Կենտկոմ

II

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐԴՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀԿ(բ)Կ ԿԵՆՏԿՈՒԻ յԵՎ ԿՎՀ ՈՒՍԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՈՅԵՄԵՐԻ 4-Ի
ՎՈՐՈՇՈՒՄ (1932 թ.)*

Գյուղական կուսակազմակերպություններն ամրապնդելու, նը-
րանց շարքերի մարտունակությունը բարձրացնելու և կուսակցության
առաջ զրված խնդիրների (կոլտնտեսությունների տնտեսական ամ-
րապնդում, ցանքի, հացամթերումների կատարում և այլն) իրագործման
համար կուսակազմակերպություններն ու աշխատավոր մասսաները դո-
րահավաքելու նպատակով անհրաժեշտ համարել Հյուսիսային Կովկաս-
սի, առաջին հերթին Կուբանի գյուղական կուսակազմակերպության
գտումը: Զտումը պետք է կուսակցությանն աղատի այնպիսի մարդ-
կանցից, վորոնք ոտար են կոմունիզմի գործին, կուլակային քաղա-
քականություն են կիրառում, բարոյալքված են, անընդունակ են գյու-
ղում կուսակցության քաղաքականությունը կիրառելու համար: Զըտ-
վածներին աքսորել, վորպես քաղաքականապես վտանգավորների: Զը-
տումը պետք է ոգնե նոր կադրեր առաջ քաշելու կուսակցությանն
ամենահավատարիմ կոլտնտեսականներից, հարվածայիններից և կուսակ-
ցության շուրջը համախմբե կոլտնտեսային լայն մասսաներին՝ կոլտն-
տեսություններն ամրապնդելու համար և կուլակի դեմ:

Հաստատել զտման կոմիտեան, բաղկացած հետևյալ ընկերներից.—
Շկիրյատով (նախագահ), Նովոսիլով, Գորչին, Իվանիցկի և Խրիստինկո:

III

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈՍՅԵՐԻՏԱԿԱՆ ԿԱԶ-
ՄԱԿԵՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀամԿՅՅՄ ԿԵՆՏԿՈՒԻ 1932 թվի նոյեմբերի 6-ի վորոշումը

Անհրաժեշտ համարելով Հյուսիսային Կովկասի գյուղական կոմյե-
րիտական կազմակերպությունները մաքրել խորթ տարրերից, ապահովել
նրանց շարքերի վճռական ամրապնդումը և ամենամեծ չափով բարձ-
րացնել ՀամԿՅՅՄ գասակարգային արթնություններն ու մարտունա-
կությունը՝ կուլակի դեմ պայքարի ընթացքում,—կատարել Հյուսիսային
Կովկասի, առաջին հերթին Կուբանի ու յոյնների գյուղական կոմյե-
րիտական կազմակերպությունների գտումը:

Հյուսիսային Կովկասի գյուղական կազմակերպությունների ան-
դամների գտումը պետք է ոժանդակե ավելի յեվս մեծ չափով զորահա-
վաքելու ՀամԿՅՅՄ անդամներին՝ կուսակցության և խորհրդային իշ-
խանության առաջադրած խնդիրների կատարման համար,—գյուղատն-
տեսության բնագավառում (ցանքի և հացամթերումների պլանների կա-
տարում, կոլտնտեսությունների կազմակերպչական տնտեսական ամ-
րապնդում, պայքար կուլակի դեմ, բերքատվության բարձրացում) և
պետք է աղատե ՀամԿՅՅՄ-ը գասակարգայնորեն խորթ և բարոյա-
լքված տարրերից, այնպիսի «կոմյերիտականներից» և «ակտիվիստնե-
րից», վորոնք արտահայտելով կուլակային գիծ, սաբոտաժի յեն յեն-
թարկում պետական առաջադրությունների կատարումը, բունում են
Հ Կ (բ)Կ և խորհրդային իշխանության միջոցառումներին կուլակային
դիմադրություն կազմակերպիչների ճանապարհը:

Հաստատել Հյուսիսային Կովկասի Յերկրային կոմյերիտական կազ-
մակերպության զտման հանձնաժողովը հետևյալ ընկերներից—Սալտա-
նով (նախագահ), Տատարնիկով (փոխ-նախագահ), Կոյբայի, Կրիվցով
և Բելիբա (անդամներ):

ՀամԿՅՅՄ ԿԵՆՏԿՈՒԻ ԲԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ԿՈՍՍՈՐՅԵՎ

ԽՍՀՄ Ժողկոմիտեի ԾԵՎ ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԽՍՀՄ Ժողկոմիտեի և ՀԿ(Բ)Կ Կենտկոմը վորոշում են՝

1) Ի նկատի ունենալով, վոր թաթարական ԱԽՍՀ և Մոսկվայի մարզը ժամկետից առաջ կատարել են ԽՍՀՄ Ժողկոմիտեի և ՀԿ(Բ)Կ Կենտկոմի կողմից նրանց համար սահմանված հացամթերումների տարեկան պլանը՝ թե ամբողջովին վերցրած և թե առանձին կուլտուրաների վերաբերմամբ, և իրենց ապահովել են գարնանացանի սերմացույով, ներկա ժամանակից սկսած թույլ տալ թաթարական ԱԽՍՀ և Մոսկվայի մարզի կուլտեստսոթյուններին, կուլտեստսականներին և աշխատավոր մենատեսեսներին առանց արգելքի վաճառել իրենց հացը (ալյուր, հացահատիկ, թխված հաց) թե պետական ու կոոպերատիվ կադմակերպություններին և թե թաթարական հանրապետության և Մոսկվայի մարզի շուկաներում և կայարաններում:

2) Նախազգուշացնել մնացած մարզերի, յերկրամասերի ու հանրապետությունների կուլտեստսոթյուններին, կուլտեստսականներին և անհատական տնտեսություններին, վոր համաձայն ԽՍՀՄ Ժողկոմիտեի և ՀԿ(Բ)Կ Կենտկոմի 1932 թ. մայիսի 6-ի վորոշման, նրանց ևս կտրվի իրենց հացն անարգել ծախելու իրավունք՝ Ժողկոմիտեի և Կենտկոմի սահմանած ժամանակից առաջ, այսինք 1933 թվի հունվարի 15-ից առաջ, յեթե այդ մարզերում, յերկրամասերում ու հանրապետություններում ժամկետից առաջ կատարվի հացամթերումների տարեկան պլանը և ապահովվի գարնանացանի սերմացուն:

3) Նախազգուշացնել կուլտեստսոթյուններին, կուլտեստսականներին ու անհատականներին, վոր այն մարզերում, յերկրամասերում ու հանրապետություններում, վորոնք չեն կատարվել հացամթերումների տարեկան պլանը և գարնանացանի համար չեն ապահովվել սերմացույով, հացի կուլտեստսային առևտուր չի թույլատրվի, ինչպես նաև յեվ նախազգուշացնել նրանց, վոր այդ մարզերում, յերկրամասերում ու հանրապետություններում հացի առևտուրը կհետապնդվի՝ վորպես սպեկուլիացիա, համաձայն Կենտգործկոմի և Ժողկոմիտեի 1932 թվի որոշումի 22 ի վորոշման:

ԽՍՀՄ Ժողկոմիտեի նախագահ՝ Վ. ՄՈՒՈՏՈՎ (Սիդյաբից):
ՀԿ(Բ)Կ Կենտկոմի քարտուղար Ի. ՍՍՈՒԻՆ
2 դեկտեմբերի 1932 թ.

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՅԵՐԿՐԱՄԱՍՈՒՄ ՀԱՅԱՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԿ(Բ)Կ Հյուսիսային Կովկասի Յերկրկոմի բյուրոյի 1932 թվի նոյեմբերի 2-ի վորոշումը*), մասնակցությամբ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի ներկայացուցիչներ ընկ. ընկ. Կազանովիչի, Սիկոյանի, Գամարնիկի, Շիրյասովի, Յագոդայի, Չերնովի, Յուրկինի, յեվ Կոստայեվի

1) Յելնելով նրանից, վոր ՀԿ(Բ)Կ Կենտկոմը, յերկրամասի համեմատաբար անբարենպաստ բնական պայմանների հետևանքով, վորոնք մի շարք ռայոններում մի փոքր վատացրին բերքն անցյալ տարվա համեմատությամբ, իջեցրեց անցյալ տարվա հանդեպ կրճատված հացամթերումների պլանը 59 միլիոն փթով, ընդունել անշեղորեն և անպայման կատարելու հացամթերումների տարեկան վերջնական պլանը կուլտեստսային-գյուղացիական սեկտորներում 97 միլիոն փութ, վորից ցորեն—38 միլիոն փութ:

Պարտավորեցնել ռայկոմներին, վորոնց վերաբերմամբ իջեցված է պլանը, վոչ ուշ, քան մինչև նոյեմբերի 5-ը, պլանի կրճատումը հասցնել մինչև ՄՏԿ, կուլտեստսոթյուն և ստանիցա (մենատնտեսին):

Բոլոր ռայոնները, ՄՏԿ-ները և կուլտեստսոթյունները պարտավոր են այս պլանը անշեղորեն և պարտադրաբար կատարել, դադարեցնելով ամեն տեսակ դիսկուսիաները և այսպես կոչված՝ հաշվարկումները, վորոնք վոչ այլ ինչ են, յեթե վոչ հացամթերումների պլանի կատարման կուլակային վիժեցման զործիք:

2) Հաստատել խորհտնտեսությունների կողմից հացը հանձնելու վերջնական տարեկան պլանը 17 միլիոն փութ, վորից ցորեն 6,4 միլիոն փութ, կատարելով հետևյալ բաշխումն ըստ սխտեմների.—
Չերնոարևատ—14 միլիոն, վորից ցորեն—5,5 միլիոն:
Գոսպրոմսովխոտրեստ—1,060 հազար փ.

*) «Մոլոտ»-նոյեմբերի 4 1932 թ. № 3409

Ստրտանաձորենսի—720 հազար փ

Սոյուզախար—275 հազար փ.

Անասնաբուծ. խորհանտեսություններ—586 հազար փ.

Մնացածները—360 հազար փ.

Պարտավորեցնել խորհանտեսային միավորումներ և վերատեսուչներին, Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդի մթերման լիազորի հետ միասին, նոյեմբերի 3-ի ընթացքում պլանը հասցնել մինչև յուրաքանչյուր խորհանտեսություն:

3) Յորենի, յեգիպտացորենի և արևածաղկի մթերումներն ուժեղացնելու համար Յերկրկումը պարտավորեցնում է՝

ա) Ամեն տեղ ցորենի կալան ավարտել նոյեմբերի 10-ին:

բ) Յեգիպտացորենի և արևածաղկի բերքահավաքն ավարտել նոյեմբերի 20-ին:

գ) Յորենը մյուս կուլտուրաների հանդեպ տեղափոխել առաջին հերթին, ի հաշիվ հացամթերման պլանի:

դ) Արևածաղիկը մթերել այն կարգով, վոր սահմանված է հացի համար, և արևածաղկի տարեկան մթերման պլանը կատարել հացամթերումների համար սահմանած ժամկետում, այսինքն 1933 թվի հունվարի 1-ից վոչ ուշ:

Յերկրկումը պահանջում է ռայոնական կուսակցական ու խորհրդային կազմակերպություններից անմիջապես այնպիսի բեկում ստեղծել ցորենի, արևածաղկի ու յեգիպտացորենի մթերման գործում, վորը ապահովե նախորդ շրջանում պակաս մթերվածի հավաքումն ամենամոտ հնգորյակում:

4. Հացամթերումների ու ցանքի պլանի կատարման համար Յերկրկումի ու Յերկրգործկումի լիազորներ նշանակել ռայոններում հետևյալ ընկերներին, վոչ պակաս քան մեկ ամսով.—

1. Կասիլով—Սլավյանսկի ռայոն
2. Ռյաբոկոն—Կորենովսկի »
3. Դորոշև—Պալովսկի »
4. Պիվովարով—Տիխորեցկի »
5. Շաբլինսկի—Տաղանրոզի »
6. Մոլչանով—Մեչոտինսկի »
7. Պուտնին—Կուչևսկի »
8. Չիչերով—Սալսկի »
9. Կարոև—Ուստ-Լաբինսկի »
10. Իվանով—Ստարո-Մինսկի »
11. Սոկոլով—Նովոչերկասկի »
12. Լաբին—Կոնստանտինովսկի »
13. Լազոտինսկի—Պետրովսկի »

14. Պրիմակով—Կամենսկի »

15. Սեմյակին—Յեյսկի »

16. Կուդրյավցեի—Բրյուկսովցեկի »

17. Անդրևև—Կրասնոսկինի »

18. Գոլյման—Վեչենսկի »

19. Բարկով—Տացինսկի »

20. Իվանով Կ.—Ուրադնենի »

21. Միլոսլավսկի—Մորոզովսկի »

22. Չախարով—Պրոլետարսկի »

23. Բոչարով—Բլազոդարնինի »

24. Պրավդեվցեի—Կանսկի »

25. Կրիշին—Տարասովսկի »

26. Ֆեդորով—Վերին-Դոնի »

27. Կուդրյավցեի—Ի-Ուրիվսկի »

28. Զվերև—Մետվեժենսկի »

29. Ֆիլով—Կուրգանսկի »

30. Մատվեև—Տիմաշևսկի »

31. Լիզլով—Կրասնոդարի »

Մեկնումը—նոյեմբերի 4-ից վոչ ուշ:

ՎՈՒՐԱՆԻ ՈԱՅՈՆՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԹԵՐՄԱՆ ՅԵՎ ՅԱՆՔԻ ԸՆԹԱՅՔԻ ՄԱՍԻՆ

Յերկրկոմի բյուրոյի 1932 թվի նոյեմբերի 4-ի վորուումը
ՀԿ (բ) Կ Կեմկոմի ներկայացուցիչների մասնակցութայամբ*)

Նկատի ունենալով Կուբանում հացամթերումների և աշնանացանի պլանների առանձնապես խայտառակ վիժումը, Կուբանի ուսումնական կուսակազմակերպութայունների առաջ դնել մարտական խնդիր— ջախջախել հացամթերումների ու ցանքի սարքատաժը, վորը կազմակերպել են կուլակային հակահեղափոխական տարրերը, ջախջախել գյուղական կոմունիստների մի մասի դիմադրութայունը, վորոնք դարձել են սարքատաժը փաստորեն կիրառողներ և վերացնել կուսակցութայուն անդամի կոչման հետ անհամատեղելի պասսիվութայունն ու հաշվողականութայունը սարքատաժ անողների հանդեպ: Ապահովել տեմպերի արագ աճումը, հացամթերումների ու ցանքի պլանների լիակատար և անպայման կատարումը, զբաղով համախմբելով կուսակցական շարքերը և ամրապնդելով կոլտնտեսութայունները:

Յերկրկոմը վորոշում և՛

1. Ծանքի և հացամթերումների պլանը պարզապես վիժեցնելու համար սև տախտակին հանել հետևյալ ստանիցաները.— Նովո-Րոժդեստովենսկայա (Տիխորեցկու ուսյոն), Մեդվեդովսկայա (Տիմաշևսկի ուսյոն) և Տեսիրդոնսկայա (Կուրգանսկի ուսյոն):

Սև տախտակին հանված ստանիցաների վերաբերմամբ կատարել հետևյալը.—

Բացի դրանից Հյուս. Կովկասի ուսուցիչական կուսակազմակերպութեանների մի մասը և յերկրային դեկավարութեանը իր ժամանակին չեն նչատել կուսակցական դիսցիպլինայի թուլացումը գյուղական կոմունիստների միջև և պատշաճ հակահարված չեն տվել ոպորտունիստական յերբերումներին ու ստատանումներին: Հյուսիսային Կովկասի կուսակազմակերպութեանը չի կարողացել նկատել դասակարգային թշնամու մանյովրները, վորոնց նպատակն է յեղել հափշտակել, թագցնել հացը և հետո գործն այնպես ներկայացնել վոր իբր թե մթերելու վոչինչ չկա, վոր ապրանքային հաց չկա:

Այն ստանիցաներն ու ուսուցիչները, վորտեղ կուլակային և կորգիչ տարրերը առանձնապես ուժեղ դիմադրութեան են ցույց տվել հացամթերումներին, շարունակել են ոգտվել պրոլետարական քաղաքի նույնպիսի ուշադրութեամբ և ոգնութեամբ, ինչպես և այն ստանիցաները, վորոնք քարեխղճաբար կատարում են իրենց պարտավորութեանները պետութեան հանդեպ: Դեպի այն ստանիցաները, վորտեղ կուլակներն ու յենթակուլակները, ծուլելն ու կորգիչները հափշտակեցին ու առն տարան կոլտնտեսային հացը, հացահատիկները դիտավորյալ կերպով թողին ծղոտի և հարդի մեջ, վատնեցին հազարավոր ցնտաներ կոլտնտեսային հաց, — դեպի այս ստանիցաները մինչև ամենավերջին ժամապ

նախներս մերմուծվում էին միլիոնավոր ռուբլիների արդյունաբերական սպրտմենտ, գյուղատնտեսական մեքենաներ, այս ստանիցաներին առաջվա մեծ քանակությամբ էին պետական վարկեր յեվ ամեն տեսակ արտադրանքներ՝ խորհրդային իոխանության կողմից սահմանված այն գյուղերի յեվ ռայոնների համար, վորոնք բարեխլիճաբար կատարում են իրենց պարտավորությունները պետության հանդեպ:

Կոլտնտեսութեան հացը հափշտակող գողերն անպատիժ էին մնում և ծաղրում բարեխիղճ, առաջավոր կոլտնտեսականներին: Հյուսիսային Կովկասի կուսակազմակերպութեանները թերագնահատեցին սոցիալիստական, հասարակական սեփականութեան սրբութեան ու անձեռնմխելիութեան վերաբերյալ ղեկըտի նշանակութեանը: Նրանք չհասկացան, վոր կոյսնեստային բեքի, կոյսնեստային մասույքի պտեպանության համար մղվող պայքար հանդիսանում է այն ամբողջ աշխատանքի ծակը, վորը կատարվում է կոյսնեստայութեանների կազմակերպչական օգնական ամբապնդման յեվ կոյսնեստականների սոցիալիստական վերադաստիարակության համար: Կուլակային ազդեցութեան դեմ պայքարելու այս ամենաուժեղ զենքը Հյուսիսային Կովկասի կուսակազմակերպութեանը չի ոգտադործել:

Հյուսիսային Կովկասի գյուղական կուսակազմակերպութեանների արդեն սկսված դրոմը, առաջին հերթին Կուրանի ուսուցիչներում, վորոնք ամենից շատ արատավորեցին իրենց՝ ցանքի և հացամթերումների գործում, — պետք է Հյուսիսային Կովկասի կուսակազմակերպութեան ազատե կուսակցութեան ոտար և թշնամի տարրերից, պետք է ուժեղացնեն նրա մարտունակութեանը և ոգնե գորահավաքելու բոլոր կուսակցական ուժերը և անկուսակցական կոլտնտեսային ակտիվը՝ ցանքի և հացամթերումների պլանը կատարելու, կոլտնտեսութեանների կազմակերպչական տնտեսական ամբապնդման համար:

Վերջին որերս առանձին գյուղական կուսակազմակերպութեաններ վճռականապես մաքրելով իրենց շարքերը ոպորտունիստական և այլատեսակ տարրերից, հենվելով առաջավոր կոլտնտեսականների վրա, ջախջախեցին կուլակային սարտաժի իրենց ստանիցաներում: Կուրգանինսկի ուսուցիչ Տեմիրգոյիվսկայա ստանիցան, վորին Պրավդան շանել էր սև տախտակին, զգալի չափով ուժեղացրեց հացի հանձնումը և արդեն մոտենում է հացամթերումների ամբողջ արեկան պլանի կատարման: Պավլովսկի ուսուցիչ, վորտեղ կուլակային սարտաժի առանձնապես ուժեղ էր, այժմ մի քանի անգամ ավելի հաց է մթերվում:

Հյուսիսային Կովկասի դասերը պետք է յուրացնեն բոլոր կուսակազմակերպութեանները: Մասնավորապես պետք է մասնանշել Ուկրաինան, վորը Հյուսիսային Կովկասի հետ այժմ վճռում է ամբողջ Միութեան հացամթերումների հաշտութեանը: Ուկրաինայում ևս կան

փաստեր, վարոնց համաձայն մի քանի կուսկազմակերպութիւններ պատսիվ ու հաշտվողական վերաբերմունք են ցույց տալիս դեպի կուլակն ու ոպորտունիստները:

Ավելի ուժեղացնել դասակարգային արթնութիւնը: Անխնա հակահարված ոպորտունիստներին և հաշտվողականներին:

Առաջավոր կոյնսեռականների հետ միասին, հեմվելով նրանց վրա, բաւարարելով ամբողջ կոյնսեռային մասսայի հեղափոխական ախտի վարումը կուլակայային մնացորդների դեմ մղված պայքարում, — բոլորովիցները կիսատեմ հացամբերումների յնվ ցանկի պետական պլանը:

ԴԵՊԻ ՎՃՌԱԿԱՆ ՊԱՏԲԱՐ ԿՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԴԵՄ*

Մենք հիմնականում վերացրինք կուլակութիւնը Խորհրդային Միութեան դիտավոր հացահատիկային ու հումուլթային ուսյոններում, այդ ուսյոնների կուլակտիվացման հիմունքով: Գյուղացիական չքավոր-միջակ տնտեսութիւնների ավելի քան 60 տոկոսը մենք համախմբեցինք կոլտնտեսութիւններում, կազմակերպեցինք հացահատիկային և անասնաբուծական խորհանտեսութիւնների զորեղ ցանց, մեր գյուղատնտեսութիւնը հաստատապես դրինք զարգացման սոցիալիստական ճանապարհի վրա:

Սա յի գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման քաղաքականութեան միանգամայն ակնհեր արդյունքը: Կուսակցութիւնն այս քաղաքականութիւնը կիրառել է և կիրառում է հաղթահարելով դասակարգային թշնամու — կուլակութեան ամենակատաղի դիմադրութիւնը, կուլակութեան, վորը հանդիսանում է մեք յետիւում կապիտալիստական ջանադորման վերջին պատվարը:

Կուլակները փորձել են գյուղացիութեան չքավոր-միջակ մասսաներին հետու պահել կոլտնտեսութիւն մտնելուց: Այդ նրանց չհաջողվեց: Սակայն համատարած կուլակտիվացման հենց սկզբում մենք տեսնում եյինք կուլակային դործեկերպի մի այլ տեսակը — կոլտնտեսութիւնները մտնելու փորձեր՝ նրանց ներսից քայքայելու համար 1929 թվականին առանձին ընկերներ չքմբանեցին այդ նոր մանյովրը և կողմակից եյին կուլակներին կոլտնտեսութիւններում ընդունելուն: Ընկ. Ստալինը ադրաբաղեւ-մարքսիստների կոնֆերանսում իր ճառով վճռականապես հարվածեց այդպիսի անթույլադրելի բարեկուլութիւնը:

«Ծիծաղելի յի, — ասում էր ընկ. Ստալինը, — այն հարցը, թի արդյոք կարելի յի կուլակին ընդունել կոլտնտեսութիւն: Իհարկե չի կարելի նրան թողնել կոլտնտեսութիւն: Զի կարելի, վորովհետեւ նա կոլտնտեսային շարժման յերզվյալ թշնամին է»:

Յերբ դիտավոր հացահատիկային և հումուլթային ուսյոններում համատարած կուլակտիվացումը հիմնականում ավարտվեց, կուլակային

*) «Գրավդայի» առաջնորդողը — դեկտեմբերի 8, 1933 թ.

Մեացորդներն իրենց գլխավոր փորձն են անում կոլտնտեսութիւնը ներսից քայքայելու համար:

Այստեղից բղխում է կուլակային տարրերի ձգտումը՝ ամեն տեսակ ծուռ ու մուռ ճանապարհներով խցկվել կոլտնտեսութիւն, կոլտնտեսային ապարատը (հաշվետարներ, պահեստապետներ և այլն) և նույնիսկ գյուղական կուսակցական բլիշները, ոգտազործելով մեր կուսակցական և խորհրդային աշխատողներին կողմից դասակարգային արթնութեան թուլացումը, վորոնք յերբեմն յենթարկվում էին զորացրված արամադրութիւնների և դատուս այսպես.— քանի վոր համատարած կուլեկտիվացումը հիմնականում ավարտված է, ուրեմն կուլակը և նրա զործակալը, աջ ոպորտունիստը այլևս վտանգավոր չեն, հացաւթերումները, ցանքը, կոլտնտեսութիւնների ամբապնդումը կնթանան ինքնահոսով:

Անցյալ տարի այս յերևույթն ամենացայտուն կերպով նկատվեց Ուկրաինայում: Այս տարի— Կուբանում, մասամբ Հյուսիսային Կովկասի ուրիշ ռայոններում:

Յերկու տեղումն էլ կուլակային տարրերը փորձում էին սիսանժատիկորեն զրդել կոլտնտեսականների հետամնաց խմբակներին՝ հափշտակել կոլտնտեսային բերքը (վորպեսզի վիժեցնեն հացաւթերումներն ու ցանքը), վատ մշակել կոլտնտեսային դաշտերը, անփուլթ (կամ ուղղակի ֆասարարական) վերաբերմունք ցույց տալ դեպի տրակտորները և ձիերը: Մի քանի կուսակցական կազմակերպութիւններ (սա առանձնապես տեղի ունեցավ անցյալ տարի Ուկրաինայում) փոխանակ դասակարգային թշնամիների նոր մանյովրաներին պատասխանելու՝ մասսաների առաջ նրանց անխնայորեն մերկացնելով, փոխանակ կուլակի յեմ յենթակուլակի դեմ հաստատուն և խիստ միջոցները զուգակցելու կոլտնտեսութիւններում մասսայական բացատրական աշխատանքի ուժեղացման հետ, զլորվեցին մերկ, «ձախլիկ» վարչարարութեան ուղին, դրանով ուժեղացնելով կուլակի դիրքերը և հեշտացնելով նրա ազդեցութիւնը հետամնաց կոլտնտեսականների վրա:

Հի(բ)ն հենտկումը տվեց մի շարք կարևորագույն դիրեկտիվներ, վորոնց նպատակն էր ուժեղացնել կուսակցական կազմակերպութիւնների ուշադրութիւնը դեպի գյուղատնտեսութեան հարցերը և նրա սոցիալիստական վերակառուցումը, հաշվի առնելով դասակարգային բովանու նոր մանյովրները:

Յելակետ ունենալով այն, վոր անհրաժեշտ է կոլտնտեսային, մասսաներին զորահավաքել կոլտնտեսութիւնների կազմակերպչական տնտեսական ամբապնդման համար, Կենտկումը կառավարայան հետ միասին բնդունեց պատմական մի վորուում՝ հասարակական (սոցիալիստական) սեփականութեան պահպանութեան մասին:

Կենտկումը կուսակցական կազմակերպութիւններին յեմ հաղային որգաններին վնասկանապես յերեսով դարձեց դեպի հաղամտակամ վորակի յեմ սոցիալիստական դասերի բերտաւարայան բարձրացման հարցերը: Կոյնեցեային կադրերի ամբացման նպատակով, Կենտկումը վերակազմեց կոմհամայարանները յեմ դարձեց գյուղատնտեսական բարձրագույն դպրոցներ:

Կուսակցութեան դիրեկտիվները կատարելու հիմունքով, վնասկանապես հաղթահարելով կուլակային տրամադրութիւնը և «ձախ» խտորումները, մեր մի շարք կուսակցական կազմակերպութիւնները խաշոր հաջողութիւններ ձեռք բերին սոցիալիստական գյուղատնտեսութեան վերելքի, հափշտակումների դեմ պայքարելու, կոլտնտեսային աշխատանքը կազմակերպելու դործում:

Բավական է հիշել Մոսկվայի մարզը և բարաբական համրապնջութիւնը, վորոնք իրազործելով գյուղատնտեսութեան կոնկրետ դեկավարութիւնը, հաղթանակորեն ավարտեցին այս տարվա կարևորագույն գյուղատնտեսական կամպանիաները, ժամկետից առաջ կատարեցին հացաւթերումների տարեկան պլանը և սերմաւթերումը և տնցան կոլտնտեսային առևտրի զարգացման: Այժմ պլանի կատարման մտտ են մեր յերկրի այնպիսի կարևորագույն հացահատիկային ռայոնները, ինչպիսին են Միչին Վոլգան և Կենտրոնական Սեվաստոպոլի օջջանը: Անցյալ տարվանից շատ ավելի հաջող են ընթանում հացաւթերումները Արեւմտայան Սիբիրում և Բաշկիրիայում: Յուրաքանչյուր հանրապետութեան մեջ, մարզում, յերկրամասում մենք ունենք տասնյակ առաջավոր ռայոններ, վորոնք կատարել են հացաւթերումները, ցանքի և աշխանավարի պլանները: Յուրաքանչյուր յերկրամասում մենք ունենք որինակելի աշխատանքի փայլուն որինակներ՝ բերքի բարձրացման ասպարիզում, վորոնք պարզ ցույց են տալիս, թե մենք ինչ հրակայական հնարավորութիւններ ունենք այս բնագավառում:

Սա կոյնեցեայինութիւնների ամբապնդման արդյունքն է, կուլակի դեմ հաջողութեամբ պայքարելու արդյունք:

Մակայն այնտեղ, վորտեղ աշխատանք չի ծավալվել կոլտնտեսութիւնների կազմակերպչական տնտեսական ամբապնդման համար, վորտեղ հիմնականում ավարտելով համատարած կոլեկտիվացումը, հանգատեց հիմնականում ավարտելով համատարած կոլեկտիվացումը, հանգատեց են, վորտեղ կոլտնտեսային մասսաները վտաքի. չեն հանվել կուլակի նոր մանյովրների, ամենից առաջ կոլտնտեսային բերքի հափշտակումների դեմ պայքարելու համար, վորտեղ թերահանատեղ են հենտկումի ու կառավարութեան պատմական վորոշուումը՝ հասարակական (սոցիալիստական) սեփականութեան պահպանութեան մասին, վորտեղ թույլ են տվել գյուղական կուսակցական կազմակերպութեան մասին, վորտեղ թույլ են տվել գյուղական կուսակցական կազմակերպութեան ունեցում, վորտեղ, ոգտվելով դրանից, խցկվել են թշնամի

տարբեր, վորտեղ բաժանանաչափ չեն զբաղվել կուսակցական-մասսա-
յական և դաստիարակչական աշխատանքով,—մենք տեսնում ենք
գյուղատնտեսական կարևորագույն կամպանիաների կադրման ձրգ-
ձգում:

Սա վերաբերում է առաջին հերթին կուբանին, մասամբ նաև
Հյուսիսային Կովկասի մյուս ուսյուններին և Ուկրաինայի ու Ներքին Վոլ-
գայի մի քանի ուսյուններին:

Հետևանքն այն է յեղել, վոր Հյուսիսային Կովկասում (Կուբանի,
Ստավրոպոլի և Թերեքի ուսյուններում) ավելի քան 20 տոկոսով Թե-
րակատարված է աշնանացանի պլանը: Մթերույթների տարեկան պլանի
կատարման գործում Ուկրաինան, Հյուսիսային Կովկասը և Ներքին Վոլ-
գան շարունակում են զբաղվել վերջին տեղը:

Միանգամայն պարզ է, վոր Հյուսիսային Կովկասի, Ուկրաինայի
և Ներքին Վոլգայի հետամնացությունն այն պարագայի արդյունքն է,
վոր այդ ուսյունների կուսակցական կազմակերպությունները համա-
տարած կոլեկտիվացումը հիմնականում ավարտելուց հետո, Թուլացրել
են իրենց ուշադրությունը դեպի գյուղատնտեսությունը, Թուլացրել
են պայքարը կուլակության մնացորդների դեմ:

Կուլակության աջ գործակալները, վորոնք տեղ-տեղ դեռ չեն
մերկացված և կուսակցությունից դուրս չեն շարտված, վորոնք, հիշելով
կուսակցության 16-րդ համագումարի վորոշումները՝ աջ ոպորտունիս-
տական հայացքների և կուսակցության պատկանելու անհամատեղե-
լիության մասին, լոյալ են ձևանում դեպի կուսակցության գլխավոր
գիծը, ինչպես կուլակը լոյալ է ձևանում դեպի խորհրդային իշխանու-
թյունը,—այդ կուլակային գործակալները և նրանց աջակիցներն այլ
կերպ են դատում:

Ռյուտինի հակահեղափոխական խմբակը, վորը բաղկացած էր
նախկին ոպորտյուններներից, մասնեց գույները վորտեղ աջ յերկերե-
սանիների գաղտնի դիտավորությունները: Սպիտակ գվարդիական դա-
վադիրների այդ խմբակը,—վորոնցից մի քանիսները գրպաններում
կուսակցական տոմսեր ունեյին,—ուղղակի հայտարարում էր, վոր նա
կողմնակից է կուլակության վերականգնման: Կուսակցության կողմից
մերկացված այդ չնչին խմբակն ասում էր այն, ինչ վոր մյուս յերկե-
րեսանիներն են մտածում:

Հակառակ կուլակոլոյի յեղ գրա աջ դաժնակիցների դիմադրու-
թյան, հակառակ աջերի «ճախլիկ» ոգնականների, կուսակցությունը հրա-
կայական հաջողություններ ձեռք բերեց գյուղատնտեսության սոցիալիս-
տական վերակառուցման ասպարիզում: Կոլեկտիվային կարգերը վերջնա-
կանապես հաղթեցին: Կոլեկտիվային ու խորհրդային ուսյունների
հաջողությունների, ցանկերի տարածության զգալի յայնացման հիմունքով,

պրոլետարիան պետությունն ստանում է մի քանի հարյուր միլիոն փրակ-
ավելի հաց, քան ստանում էր մինչև 15-րդ համագումարը: Թուրքան-
յուր կուսակցական յեղ յուրաքանչյուր բանվոր հասկանում են, վոր ա-
ռանց դրան չեյին կարողանա ապահովել աղյուսաբերության յեղ պրո-
լետարիատի բուռն անուր վերջին տարիներում, չեյին կարողանա կառու-
ցել Մագնիսուսոյն ու Դնեպրուսոյը, չեյին կարողանա սեղծել ամբողջ
ճեղսության սոցիալիստական վերակառուցման սեփական բազա, չեյին
կարողանա իրագործել ԽՍՀՄ միջազգային հզորության ամրապնդումը:

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման դեմ, ին-
դուստրացման բուլշևիկյան տեմպերի դեմ պայքարող աշերի դիծը տա-
նում էր դեպի այն դրությունը, վորով ԽՍՀՄ կրտսնար միջազգային
քմակերիակի մի գաղութ, մեր յերկիրը կատանար Չինաստանի դերը:
վորին մաս-մաս են անում, վորից վերցնում են այն ամենն, ինչ վոր
ուղում են:

Մենք դեռ վերջնականապես չենք հաղթահարել շարքված կուլա-
կության մնացորդների դիմադրությունը: Այդ դիմադրությունը ար-
գելակում է մեր սոցիալիստական գյուղատնտեսության դարգացումը,
արգելակում է կոլտնտեսությունների և խորհրդային ուսյունների
ամրապնդումը: Նա ուժեղանում է, շնորհիվ կոլտնտեսականների մեջ
յեղած ու դեռ ևս չվերացված մանր-սեփականատիրական տրամադրու-
թյունների:

Կոլեկտիվային մասսաների սոցիալիստական վերադաստիարակության
առիստանքը պե՛տ է ավելի յեղ ուժեղացնել: Մեկե՛ն-տրակ տրային կա-
յանների ու խորհրդային ուսյունների—այդ առիստանքի հեմակները դերը
մի առանձին նեանակություն է ստանում ներկա եսապում: Կուսակցա-
կան կազմակերպությունները առանձնահատուկ ուշադրություն պիտի
կենտրոնացնեն ՄՏԿ-ների, վորպես սեյնիկա-ճեղսական յեղ քաղաքա-
կան կազմակերպությունների ուժեղացման վրա: Միայն մեքենա-տրակ-
տորային կայանների դերն ու շրջակա կոլտնտեսությունների վրա
նրանց ազդեցությունը վճռականապես ուժեղացնելով, մենք կկարողա-
նանք նոր, փայլուն հաջողություններ ձեռք բերել կոլտնտեսային
շինարարության մեջ:

Հետ մնացած ուսյունները, հանրապետություններն ու մարզերը
պետք է առաջ գնան, ուղղին իրենց սխալներն ու Թերությունները:
Հյուսիսային Կովկասի և Ուկրաինայի կազմակերպություններն ար-
դեն վորոշ աշխատանք են կատարել այս ուղղությամբ, վորոշ հաջո-
ղությունների յին հասել, սակայն դրանք դեռ բավական չեն, դեռ
չեն ամրապնդվել:

Հարվածային աշխատանքով, կուլակության մնացորդների դեմ
անխնա պայքարելով, կուսակցությունից վտարելով դասակարգային

Քշնամու կողմն անցած գաղափարներին, յերեսով իսկապես դառնալով դեպի գյուղատնտեսութիւնը, մասսայական աշխատանքը ծավալելով, կուլակի ջրադացին շուր լցնող «ձախլիկ» խոտորումների հաղթահարումով—Նյուսիսային Կովկասի, Ուկրաինայի և Ստորին Վոլգայի կազմակերպութիւնները պետք է ապահովեն հացամթերումների պահանջի ժամանակին կատարումը, վորպեսզի ծավալեն կոլտնտեսային առևտուրը, վորպեսզի պատրաստվեն բոլշևիկյան շորրորդ գարնան, վորպեսզի նորից դուրս գան գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման առաջավոր շարքերը:

Առաջ մղել գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցումը, նգմել կուլիւրքան մնացորդներին, յերկու Տրոսեով վնասկան պայտառ մղել սպորտունիզմի պիտ, աջ սպորտունիզմի, իբրեւ գլխավոր վրասանգի դիմ:

Հիմք ընդունելով ծանր արդյունաբերութեան զարգացման բոլշևիկյան տեմպերը և գյուղատնտեսութեան հետագա վերելքը, հիմք ընդունելով կոլտնտեսութիւններում աշխատանքի արտադրողականութեան բարձրացման ըստ ամենայնի խթանումը, ուժեղացնենք բանվորական մասակարարման բարեխալումը, իբրեւ արդյունաբերութեան հումաւայրայի՞ն բազայի բնագոյնում յի վերկրոյ հնգամյակի ծրագրի կատարումը:

ԿՈՒՍԱԿՑՈՒԿԱՆ ԾԱՐՔԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ*

Կուսակցութեան կենտրոնական կոմիտեյի վորոշումը, 1933 թ. վականի ընթացքում պետք է կատարվի կուսակցութեան անդամների և թեկնածուների զտումը: Միևնույն ժամանակ, այդ վորոշումը հրատարակելու որվանից սկսած, գաղարում է անդամների և թեկնածուների ընդունելութիւնն ամբողջ ԽՍՀՄ-ում, թե քաղաքում և թե գյուղում:

Կենտկոմի այդ վորոշումը, վորը բացառիկ կարևոր քաղաքական նշանակութիւն ունի, հիմնվում է 16-րդ կուսակցական կոնֆերանսի այն վորոշման վրա (1929 թ. ապրիլ), թե անհրաժեշտ է կատարել ՀԿ(Բ)Կ բոլոր անդամների ու թեկնածուների՝ պարբերական գտումներ, նպատակ ունենալով բարելավել անդերի կուսակցական կազմակերպութիւնների և ամբողջ կուսակցութեան սոցիալական կազմը, բարձրացնել նրանց քաղաքական ու բարոյական մակարդակը:

Կուսակցութեան առաջին ընդհանուր զտումը կատարվեց Լենինի առաջարկով, 1921 թվականին, յերբ կուսակցութիւնը համախմբում էր իր շարքերը նոր տնտեսական քաղաքականութեան անցնելիս: Կուսակցութեան յերկրորդ ընդհանուր զտումն ու ստուգումը յեղով 1929 թվականին, սոցիալիզմի համար պայքարելու ամենադժվար ետապում, յերբ կուսակցութիւնն անցնում էր ամբողջ ֆրոնտով ծավալուն սոցիալիստական հարձակման: Յերրորդ զտումը տեղի կունենա յերկրորդ հնգամյակի համար մղվելիք պայքարի առաջին տարում:

16-րդ համագումարից հետո կուսակցութեան անդամների և թեկնածուների թիւն ավելացել է 1,278 հազարով (1930 թվականի ապրիլի 1-ին—1,862 հազար, 1932 թվականի հուլիսի 1-ին—3,130 հազար): Ուրիշ խոսքով, վերջին յերկու տարում կուսակցութեան քանակն անել է 69 տոկոսով, մինչդեռ 15-րդ համագումարից մինչև 16-րդ համագումարը կուսակցութիւնը անել է միայն 42,2 տոկոսով, իսկ 14-րդից մինչև 15-րդ համագումարը—ընդամենը 30,8 տոկոս:

Ո՞վքեր են մտել կուսակցութեան շարքերը: Այդ տարիների ընթացքում մեր կուսակցութիւնը հիմնականում անել է—քաղաքում ի հաշիվ արտադրութեան վրա աշխատող լավագոյն հարվածայինների:

* Վերադառնի առաջնորդողը՝ Գեկտեմբերի 12 1928 թ.

գյուղում—ի հաշիվ առաջավոր կոլտնտեսականների: Մակայն կուսակ-
ցական կազմակերպութուններն ամեն տեղ չեն կատարել կուսակցու-
թյան մեջ մանողների մանրակրկիտ ընտրութուն: Դեռ ավելին,—մի
քանի կուսակազմակերպութուններ պարզապես ընկել են քանակի
հետևից, գրավվել են գործի «հանդիսավոր» կողմով, ընդունել են սո-
ւների առթիվ և այլն:

Տարրական պահանջը,—կուսակցության մեջ մտնել ցանկացող
ամեն մեկի նախնական լուրջ ուսումնասիրումը, նրա ստուգումը—հա-
ճախ խախտվել է. փոխարինվել է կոլեկտիվորեն կուսակցության մեջ
մտնելու հարա-հրոցով: Յեվ հասկանալի չե, այն դեպքերում, յերբ
մարդիկ միմիայն քանակի յետևից են ընկել, (կարծես թե կուսակցու-
թյան մարտունակութունը վորոշվում է միայն նրա քանակական
կազմով), ուշադրութուն չի դարձվել ընդունվողների վորակի վրա:
Հաճախ կուսակցության մեջ ընդունվել են ընկերներ, հենց միմիայն
նրան համակրելու և խորհրդային իշխանությանն աջակցելու համար:
Արդյոք այդ բավական է: Վոչ: Այդպիսի հիմունքով կարելի չե՞ր կու-
սակցության մեջ ընդունել մեր յերկրի աշխատավորների ճնշող մեծա-
մասնությանը:

Ահա թե ինչու յերբեմն կուսակցության մեջ ընկնում եյին այն-
պիսի ընկերներ, վորոնք դեռ չեյին համակվել այն մեծագույն պա-
սասխանասովորյան եյուրյան բմբուկումով, վոր նրանց վրա յե դրվում
կուսակցության մեջ մեկնելու, չեյին հասկանում կուսակցականի պատա-
վարտյունները, վորոնք պահանջում են անձնագոհ առաջանքի կատարել
նոզուս կոմունիզմի: Իսկ մի քանի կուսակցական կազմակերպութուն-
ներ, մանավանդ գյուղական, սաստիկ աղտեղվեցին այնպիսի մարդ-
կանցով, վորոնք ոտար են կոմունիզմի գործին, անընդունակ են
կուսակցության քաղաքականութունը կիրառելու համար: Տեղ-տեղ
մեր շարքերը կարողացավ խցկվել դասակարգային թշնամին, ոգտվե-
լով մի քանի կուսակցական կազմակերպութունների քաղաքական
արթնության բթանալուց:

Կոմունիստների մի զգալի մասի քաղաքական ցածր վորակն այն
հետևանքն է ունենում, վոր յերբեմն կուսակցականները, մանավանդ
գյուղում, անընդունակ են լինում դասակարգային թշնամու դեմ կանգ-
նել, ընկնում են կուլակի ծուղակը: Մեզանում քիչ չեն կուսակցու-
թյան այնպիսի անդամներն ու թեկնածուները, վորոնք չզիսեն կու-
սակցության ծրագիրն ու գործելակերպը, վորոնք քաղաքականապես
անգրագետ են և չեն սովորում մարքսիզմ—լենինիզմը:

Հաճախ վորեք ընկեր, իր անձնական տրամադրութուններով
անպայման հավատարիմ լինելով կուսակցության և խորհրդային իշ-
խանության, կարող է գործնականում վորպես կուսակցության ան-

դամ մնաս տալ, նույնիսկ չցանկանալով այդ—հենց այն պատճառով,
վոր նա քաղաքականապես բույլ է պատրաստված, հենց այն պատճառով,
վոր նա դեռ ևս չի կարողանում կուսակցության շահերի տեսակետից
քաղաքականապես գլխավորել և իր յետևից տանել կոլտնտեսական-
ների մասսային կամ անկուսակցական բանվորներին: Այստեղ մենք
փաստորեն գործ ունենք վոչ թե կուսակցության անդամի, այլ միայն
մի ընկերոջ հետ, վորը համակրում է նրան, իսկ մեզանում շտապում
են այդպիսի համակրողներին ընդունել կուսակցության մեջ, առանց
հասկանալու, վոր տարբերութուն կա յերկու ընկերների մեջ, վորոն-
ցից մեկը ցանկանում է ողնել կուսակցությանը, իսկ մյուսը, կուսակ-
ցության անդամը, պետք է ունենա քաղաքական անհրաժեշտ պատ-
րաստութուն, պետք է կարողանա կուսակցության լոզունգներով ա-
սուսնորդել անկուսակցական մասսային: Յերբեմն թեկնածուներից
անդամ են ընդունում այնպիսի ընկերների, վորոնք դեռ չեն յուրաց-
րել կուսակցության ծրագիրն ու գործելակերպը, դեռ չեն սովորել լի-
նել կուսակցության կարգապահ անդամներ, պայքարել նրա յերկաթյա
դիսցիպլինայի համար: Յեվ այդ արվում է՝ հակառակ լենինի այն
ցուցմունքի, թե «կուսակցության մեջ պիտի բաղնել միայն գիտակիցնե-
րին յեվ կոմունիզմին անկեղծորեն հավատարիմներին»:

Ի՞նչ կողմից է ստուգվում կուսակցության յուրաքանչյուր ան-
դամն ու թեկնածուն:

Կուսակցության յուրաքանչյուր անդամն ու թեկնածուն պարտավոր
է դիտենալ նրա ծրագրերը, կարևորագույն վորոշումները, պարտավոր
է կենսագործել այդ վորոշումները, պահպանել կուսակցության յեր-
կաթի դիսցիպլինան: «Ով բեկուզ մի փոքր չափով բույացնում է պրոլե-
տարիասի կուսակցության յերկաթի դիսցիպլինան (մանավանդ նրա դեկ-
տատորայի ժամանակ), նա փաստորեն ոգնում է բուրժուազիային՝ ընդ-
դեմ պրոլետարիասի» (Լենին):

Գյուղում յուրաքանչյուր կուսակցական պետք է նաև ստուգվի
այն տեսակետից, թե ի՞նչպես է նա պայքարում պիտան առաջադրու-
թյունների կատարման համար, հացամթերումների, մսամթերումների
ասպարիզում կոլտնտեսութունների ու մենատնտեսների կողմից նը-
սասպարիզում կատարելու համար: Գյուղում յուրա-
քանց պարտավորութունները կատարելու համար: Գյուղում յուրա-
քանչյուր կուսակցական պետք է ստուգվի այն տեսակետից, թե ի՞նչ-
պես է նա ապահովում բոլորակից և ամբողջական ազդեցությունը կոլտնտեսությունում,
պես է նա ապահովում կուլակի և յենթակուլակի դեմ, ի՞նչպես
վերջապի աղքատի և պայքարում կուլակի և յենթակուլակի դեմ, ի՞նչպես
է պահպանում սոցիալիստական, հասարակական սեփականութունը,
է պահպանում կոլտնտեսային կոլտնտեսային արտադրության:

Կուսակցության XVll-րդ կոնֆերանսը մատնանչեց, վոր անխու-
սափելի յե նաև հետագայում դասակարգային պայքարի սրումն

առանձին մտնաներում և մանավանդ սոցիալիստական շինարարու-
թյան առանձին ճակատամասերում: Կոնֆերանսը մատնանշեց, վոր
«Դեռ յերկար ժամանակվա բերացուման յուսումնաբերութիւն
ոտար դասակարգային ազդեցութեանց և քաղաքացիական քաղաքացիական
քաղաքացիական յանձնարարութեան մեջ», շեշտեց այս կապակցու-
թյամբ, վոր անհրաժեշտ է ամրապնդել/պարտաբար ղկիթատուան յեկ
օտուցանել ծավալել պայքարն բնդեմ ոպորտունիզմի, մանավանդ աջ
բեման, վոր գլխավոր վեանգն է ներկա օրջանում: Կյանքը ցույց տվեց
XVII-րդ կուսկոնֆերանսի այդ ցուցմունքների ամբողջ կարևորութունն
ու այժմեյականութունը:

Պրոլետարիատին ոտար դասակարգային ազդեցութուններն
ամենից ավելի նկատվեցին կուսակցութեան գլուղական բջիջներում:
Կուսակցութեան առանձին բջիջներում կարողացան խցկվել կուսակ-
ցութեան յերդվյալ թշնամիները, Պետլյուրովյան և այլ սպիտակ բան-
դիտական կազմակերպութունների գործակալները, նպատակ ունենա-
լով քայքայել բջիջները և վարկաբեկել կուսակցութեան քաղաքակա-
նութունը: Կան փաստեր, յերբ հացամթերումների սարսուռը, վորը
կազմակերպել է կուլակութունը, գլխավորվում է գրպաններում կուս-
տան ունեցող դավանանքով (Հյուսիսային Կովկասի մի կոլտնտեսա-
յին բջիջի քարտուղար Կոտովի գործը, վորի մասին գրել է «Պրավ-
դան»): Վերջին որերս հայտնաբերված է Դենպրոպետովսկի մարզի
Ուելսովոյի ռայոնի ղեկավար աշխատողների հանցավոր, դավաճանա-
կան գործունեութունը, վորոնք գլուղական կուսակցական կազմա-
կերպութուններին և կոլտնտեսութուններին ցուցումներ եյին տա-
լիս հացամթերումների ռայոնական պլանը չկատարելու համար:

Հացամթերումների սարսուռի հակահեղափոխական փորձերը,
կուլակութեան մնացորդների վնասարարական աշխատանքը կոլտնտե-
սութուններում վոչ մի հաջողութուն չեյին ունենա, յեթե նրանց
իրականում չորհեր կուսակցութեանը խաբող «կոմունիստներին» մի
մասը: Միայն այնտեղ, վորտեղ կուլակութեան վնասարարական աշ-
խատանքը գլխավորում եյին կուսակցութեան թշնամիները, ունենա-
լով գրպաններում կուստոմներ, — այդ աշխատանքը տալիս եր վորոշ
արդյունքներ, մասնակի կերպով քայքայում եր կոլտնտեսութուն-
ները:

Կուսակցութեան անդամների ու թեկնածուների գտումը պետք
է կազմակերպել նիւթավար կերպով, ուշադրութունը կենտրոնացնելով
կազմակերպութեան վորակի վրա: Պե՛տ է կուսակցութեան մեջ բող-
նել միայն նրանց, ով մինչև վերջ հավատարիմ է բանվոր դասակարգի
գործին, ով ամենից վեր է դասում կոմունիզմի օաներ, կուսակցութեան
օաներ:

Չորս պատվիրաններ, չորս պահանջներ կուսակցութեան յուրա-
քանչյուր անդամին ու թեկնածուին, —

Կուսակցութեան առաջ յեղիր ճշմարիտ, յեղիր ազնիվ, ք՞ վար-
քով մի խոյտառակիր կոմունիստի կոչումը:

Վճռական պայքար մղիր յերկերեսանիւնների, այլասերվածների
կուսակցութեանը խաբողների դեմ: Յերկերեսանիւններ, այլասերվածներն
ու խաբեբաները հեռու կուսակցութեանց:

Յեղիր կուսակցութեան կարգապահ անդամ, հետևողական պայ-
քար մղիր նրա գծի, վորոշումների, նրա յերկաթե դիսցիպլինայի, նրա
լենինյան Կենտկոմի համար: Ով բեկուզ ամենաչնչին չափով օտարան-
բարեկիցան յերկաթե դիսցիպլինան, նա աջակցում է բանվոր դասա-
կարգի բռնամիտերին, նա եղ չուցի Լենինյան կուսակցութեան մեջ:

Գիտեցիր կուսակցութեան ծրագրին ու գործելակերպը, սովորիր
մարքսիզմ-լենինիզմը: Ով չի ուզում աօխտեղ իր վրա, չի բարձրաց-
նում իր բազմակամ մակարդակը, նա չի կարող լինել կոմունիստական
կուսակցութեան անդամ:

Յերկրոք հնգամյակի օնմիթն, մեր սոցիալիստական ճնեստութեան
յեկ համաօխարհային հեղափոխական օարժման պայմաններում, Լենին-
յան մեծ կուսակցութեանը նօրից սուուզում յեկ մաքում է իր օարքերը,
վորպեսզի ավելի յեկա կոփե նրանց, վորպեսզի ավելի յեկա բարձր պահն
Լենինի դրօշակը:

Մերկացնելով և դուրս շարքերից շարքերից կուսակցական
դիսցիպլինան խախտողներին, աջ ոպորտունիստներին, հակահեղա-
փոխական տրոցկիստներին, յերկերեսանիւններին, խաբեբաններին (վո-
փոխական տրոցկիստներին, յերկերեսանիւններին, խաբեբաններին (վո-
րոնք թաղնվում են կուսակցութեան հետ ձեականորեն համա-
ձայնվելու քողի տակ, իսկ իրականում հակակուսակցական զաղիր
աշխատանք են կատարում), անխնա հակաբարված տալով կուսակցա-
կան գծի «ձախլիկ» ծուռումներին և դեպի ոպորտունիզմն ամեն տեսակի
հաշտվողականութեան, կուսակցութեան ավելի և կհամախմբե իր
շարքերը:

Կուսակցութեան շարքերի ստուգումն ավելի և կբարձրացնի
միատեսակութունն ու մարտունակութունը, կամրապնդե նրա կապը
աշխատավոր մասսաների հետ, ավելի սերտ կհամախմբե կուսակցու-
թեան շարքերը՝ պայքարելու յերկրորդ հնգամյակի պատմական
խնդիրները կատարման, համաշխարհային պրոլետարական հեղափո-
խութեան հաղթանակի համար:

ԱՄՐԱՊԵՏՆԵՐ ՌԱՅՈՆՆԵՐՆ ԱՏՈՒԳՎԱԾ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԴՐԵՐՈՎ*)

Կուսակցական ու խորհրդային ապարատը վճռականապես մոտեցնել գյուղին, կոլտնտեսություններին, կոլտնտեսային մասսաներին— ահա այն նպատակը, վոր հետապնդում էր կուսակցությունը շրջանները վերացնելիս: Ռայոնը դարձավ գյուղի սոցիալիստական շինարարություն հիմնական ողակը:

«Այժմ կոլտնտեսային շինարարության ծանրության կենտրոնը փոխադրված է ռայոնական կազմակերպություններ: Այստեղ են միանում կոլտնտեսային շինարարության յեվ գյուղի ամեն տեսակ այլ տեսակական աշխատանքի բեղերը,— բե կոոպերացիայի, բե խորհրդների, բե վարկերի յեվ բե մեքուսների գծով»—ասում էր րեկ. Սալիբը կուսակցության XVI-րդ համագումարում:

Վերջին տարիներս մենք գյուղ էյինք ուղարկում և շարունակում ենք ուղարկել հսկայական քանակությամբ տրակտորներ, կոմբայններ և այլն նորագույն գյուղատնտեսական մեքենաներ: Մինչև 1932 թվի հուլիսի 1-ը ԽՍՀՄ դաշտերում արդեն աշխատում էր 146 հազար տրակտոր (3¹/₂ տարում աճում համարյա 5 անգամ), 10 հազար ավտոմոբիլներ և 10,5 հազար կոմբայններ: Գյուղում սոցիալիզմի նյութական բազայի այդ աճումը, վոր կենտրոնացված է ՄՏԿ-ներում և խորհրդատեսություններում, հանդիսանում է կոլտնտեսությունների ամրապնդման կարևորագույն լծակը, լայնացնում է գյուղում պրոլետարական ղեկավարության հնարավորությունները, ոգնում է կոլտնտեսականներին սոցիալիստական վերադաստիարակության, մասնավոր սեփականատիրության մնացորդների վերացմանը կոլտնտեսություններում:

Դասակարգային պայքարը գյուղում այժմ նոր ձևեր է ընդունում: Ձարդված, բայց դեռ վերջնականապես չվճռված կուլակության մնացորդները խցկվում են կոլտնտեսությունները, փորձում են ներսից քայքայել նրանց: Դասակարգային թշնամին այժմ չի գործում կոլտնտեսության դեմ բացահայտ պայքարելու, նրանից դուրս գալու համար բացահայտ ագիտացիա մղելու ուղղությամբ: Նա այժմ ձգտում

*) «Գրավային առաջնորդը 11 դեկտեմբերի 1932 թ.

և ամենից առաջ քայքայել կոլտնտեսային արտադրությունը, վիժեցնել աշխատանքային դիսցիպլինան, կազմակերպել կոլտնտեսային հացի հափշտակումը և պետական առաջադրությունների վիժեցումը: Գրագետ, ճկուն կուլակը խցկվում է կոլտնտեսային ապարատի դանազան ողակները (հաշվետար, պահեստի վարիչ, բրեզգաղի, դաշտանավար), յերբեմն էլ կոլտնտեսության վարչության մեջ և կամաց չալախոսելով, գործը տանում է դեպի կոլտնտեսության քայքայումը, ինվենտարի փչացումը, բերքատվության իջեցումը, կոլտնտեսային դաշտերի աղտեղումը և այլն: Կուլակն սկսեց զբաղվել վնասաբերությամբ յեվ դա նրան հաջողվում է այնտեղ, վորտեղ կուսակցական կազմակերպությունը կորցրել է դասակարգային բնագոր, դարձել է աշուպոտուցիոսական տրամադրությունների գերի: Կուլակը կարող է հաջողություն ունենալ միայն այնտեղ, վորտեղ նրան ոգնում են կուստոմով քողարկված մեր թշնամիները:

Գյուղում դասակարգային պայքարի այս նոր պայմաններում, յերբ մի կողմից չտեսնված չափով աճել են մեր ուժերը, ամրապնդվել է գյուղում սոցիալիզմի նյութական բազան, իսկ մյուս կողմից դասակարգային թշնամին շարունակում է հուսահատորեն դիմադրել և վնասարարություն անել,—այլի յեվս բարձր պահանջներ են առաջադրվում ռայոնի յեվ կոլտնտեսության ղեկավարության:

Այժմ ավելի քան յերբեք, ղեկավարել ռայոնում—այդ նշանակում է գիտնալ ռայոնը, գիտնալ կոլտնտեսությունները, գիտնալ նրանց մեջ եղած մարդկանց, խորանալ կոլտնտեսային արտադրության բոլոր հիմնական հարցերի մեջ, գիտնալ կոլտնտեսության մեջ խցկված դասակարգային բեմամու դիտարարություններն ու անելիքը: Միայն այս պայմանով կարելի է ժամանակին հակահարված տալ կուլակության մնացորդներին, կոլտնտեսականներին—յերեկվա անհատականներին մասնավոր սեփականատիրական տրամադրություններն ոգտագործելու նրանց փորձերին: Միայն այս դեպում կարելի է հաջողեցնել այն, վոր կոլտնտեսությունն իսկապես դառնա բոլոսիկական:

Ռայոնական աշխատողներից այժմ առանձնապես պահանջվում է դասակարգային զգոնություն, պրոլետարական կոփվածք, քաղաքական լայն շրջահայեցողություն և դրա հետ միասին նաև գյուղատնտեսության տեխնիկայի գիտություն:

Կոմհամալսարանները բարձրագույն կոմունիստական գյուղատնտեսական դպրոցների վերածելու մասին ՀԿ(բ)Կ կենտկոմի վորոշման մեջ ընդգծվում է այն ամբողջ քաղաքական նշանակությունը, վոր ունի այդպիսի աշխատողների պատրաստությունը սոցիալիստական ունի այդպիսի աշխատողների պատրաստությունը սոցիալիստական յերկրագործության և ռայոնում կուսակցական խորհրդային ղեկավարության համար, աշխատողների, վորոնք «քաղաքական լայն զարգացրություն

ման հետ մեկտեղ ունենային բավականաչափ հատուկ գիտելիքներ թե գյուղատնտեսական տեխնիկայի և թե ագրոնոմիայի և անասնաբու-
ժության բնագավառում:

«Կենսկոմբ գեներում ե, վոր առանց այդպիսի կադրերի, գյուղատն-
տեսությունը յեվ կուսակցական խորհրդային ղեկավարությամբ ռայոնում
մոտիկ տարիներս բոլորովին անկարող կլինեն իրագործել իրենց խնդիր-
ները» (ՀԿ(բ)Կ սեպտեմբեր 21-ի վորոշումից):

Մակայն արդեն այժմ յուրաքանչյուր ռայոնական աշխատող
պետք է գիտենա այն ամենահասարակ ագրոտեխնիկական միջոցա-
ռումների վորոշ միջիմուռը, վորոնք գործադրելի յեն սովյալ ռայոնում:
Առանց դրան անհնար է կոնկրետ ղեկավարել, առանց դրան ռայոնա-
կան աշխատողի համար ավելի զժվար կլինի մերկացնել կուլակի վնաս-
սարարական աշխատանքը:

Ռայոնական աշխատողների մեջ այժմ քիչ չեն այնպիսի ընկեր-
ներ, վորոնք լարված աշխատանքի պայմաններում, մեծ բեռնվածու-
թյամբ հանդերձ, համառորեն աշխատում են իրենց գաղափարական
քաղաքական պատրաստության վրա, սխտեմատիկորեն հետևում են
լրագրերին և կուսակցական հանդեսներին, ուսումնասիրում են Մարքսի,
Լենինի, Ստալինի աշխատությունները, պարապում են զանազան հե-
ռակա դասընթացներում: Ռայոնական կուսակցական ակտիվի ինքնա-
գաղափարման այս աօխառանքը նպաստում է ռայոնական ամբողջ
կուսակցական կազմակերպության, գաղափարական բազմազան մա-
կարդակի բարձրացման, վոր իր ներքին ամենակարեւոր պայման-
ներից մեկն է հանգիստանում գյուղում սոցիալիզմի հաղթանակ կա-
ռուցման համար:

Շատ ռայոններում ռայոնական կադրերի նուստնությունը իջեցնում
է ղեկավարության մակարդակը: Աշխատողների հաճախակի տեղափո-
խությունները, վորոնք անհրաժեշտ չեն, այն հետեանքն են ունենում,
վոր մի քանի ռայոններում ղեկավար աշխատողների աշխատանքի
տեղափոխումը (սովյալ ռայոնում) կես տարուց ավելի չէ: Իհարկե այդ
հոստենությունը զժվարացնում է ռայոնը գիտենալը, նրա եկոնոմիկայի
գիտենալը, առավել ևս առանձին կուլտնտեսություններին ու խորհ-
տնտեսություններին ծանոթ լինելը:

Այն ռայոններում, վորտեղ գոյություն ունեն կայուն կադրեր,
սովորաբար մեծ նվաճումներ կան պետական միջնակարգի պլանների
կատարման, կուլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական
ամրապնդման, բերքատվության բարձրացման և անասնաբուժության
վերելքի բնագավառում:

Ռայոնական կադրերի նուստնության վերացումն իր ներքին պահան-
ջում է խոհեմությամբ, ուսադրությամբ բնորոշ ռայոնական կադրեր,

ավելի մանրադիտելի կետավ ստուգել նրանց, ավելի լավ ուսումնասիրել
կուսակցական ու սնտեսական կադրերի ռեզերվը: Այն զժվարություն-
ները, վորոնք պատահում են գյուղում այս կամ այն պետական առա-
ջադրությունները կատարելիս, մեծ մասամբ հետեանք են կուսակցա-
կան կազմակերպությունների՝ ոտար մարդկանցով աղտեղված լինելու,
կադրերը բավականաչափ չստուգելու:

Հաճախ մարդային, յերկրային ու ռայոնական կուսակցական
կոմիտեներում բավականաչափ ճշգրիտ և մտածված կերպով չի դրված
հաշվառքը և, վոր դիտարկում են, ռայոնական կադրերի ուսումնասի-
րությունը: Վոչ բոլորն են հասկանում, վոր աշխատողների հաշվառքը
քարտերով, «ազգանուն, անուն, հայրանուն, կուսատաժ և այլն» սյուն-
յակներով— դա ձևական, բյուրոկրատական հաշվառք է: Պե՞տ է գի-
տե՞նալ աօխառողի կենդանի դեմքը յեվ վոչ քե միայն շատ քիչ բան տող
հարթ: Պե՞տ է գիտե՞նալ մարդու աօխառանքի կենդանի փորձը, նրա
բոլեմիկայան դեմքը յեվ վոչ քե միայն անհետախոյան սվայոնները:

Ռայոնների հետագա ամրապնդումը կադրերով՝ որվա կարեւոր-
ագույն խնդիրն է: Պրոլետարական քաղաքը պետք է լուրջ ոգնու-
թյուն հասցնի ռայոնին այս ուղղությամբ: Մեր ՄՏԿ-ները առաջին
հերթին կարիք են զգում քաղաքականապես կայուն, կուսակցական
ու մասսայական աշխատանքի մեծ փորձ ունեցող կադրերի: Մեքենա-
տրակտորային կայանների դեմ ավելի ու ավելի յե մեծանում՝ վորպես
սխիսիկա-սնտեսական ու բազմազան կազմակերպությունների, վորոնք
պե՞տ է հսկայական աօխառանք կատարեն կոլտնտեսությունների սո-
ցիալիստական վերադասխառակության համար: Արդեն այժմ մենք ու-
նենք շատ ՄՏԿ-ներ, վորոնք վոչ միայն տեխնիկական, այլ և քաղա-
քական ոգնություն են հասցնում կուլտնտեսություններին, կուլտնտե-
սային կուսակցական և կոմյերիտական բջիջներին:

Մի քանի մեքենա-տրակտորային կայանների կից սխտեմատիկո-
րեն հրավիրվում են կուլտնտեսային ակտիվի խորհրդակցություններ,
հավաքներ: Այստեղ քննվում են ցանքի, բերքահավաքի, հացամթե-
րումների պլանի կատարման հարցերը:

Ոգնել կուլտնտեսային բջիջներին ուժեղացնելու աշխատանքը
կուլտնտեսային ակտիվի հետ— ահա ՄՏԿ կարևորագույն քաղաքական
պարտականությունը: ՄՏԿ-ի աշխատողները պետք է գիտենան, թե
ինչ է արվում կուլտնտեսություններում, պետք է ոգնեն կուլտնտեսու-
թյունների կուսակցական ու կոմյերիտական բջիջներին՝ գլխավորելու
այն պայթարը, վոր լավագույն կուլտնտեսականները, կուլտնտեսային
արտադրության հարվածայինները մղում են կուլտնտեսության գույքի
հափշտակիչների, ծուլիների, կուլտնտեսություն խցկված կուլակային
տարրերի դեմ:

ՄՏԿ ներքի աշխատողները, զինված լինելով գյուղատնտեսութեան տեխնիկայի գիտութեամբ և քաղաքական փորձով, պետք է ողնեն կոլտնտեսութեաններին՝ հայտնաբերելու վնասարարական տարրերին, վորոնք տեղ-տեղ խցկվում են կոլտնտեսութեան ապարատը և քայքայում նրա արտադրութեանը: Դրա համար իրենք, ՄՏԿ-ներն ևս պետք է լրջորեն ուժեղացվեն:

Դյուղի նոր պայմանները պահանջում են ուժեղացնել կուսակցական ու կոմյերիտական կազմակերպութեանները, կուսկազմակերպութեանները մաքրել ոտար, պնակալեզ տարրերից, այլասեռվածներից, վորոնք անընդունակ են գյուղում կիրառելու կուսակցութեան քաղաքականութեանը, այն մարդկանցից, վորոնք փորձում են դավաճանաբար վիժեցնել տնտեսական կամպանիաների կատարումը գյուղում:

Մի քանի ռայոններում և կոլտնտեսութեաններում հացամթերումների կուլակային սարքառածի կազմակերպիչները յեղել են մարդիկ, վորոնք զրպաններում ունեն կուստոմս, բայց վաղուց արդեն այլասեռվել են և կուսակցութեան գլխավոր գծի հետ «համաձայն» լինելու պատրվակով, իրականում կուլակային քաղաքականութեան են վարել: Դեպքում կուստոմս ունեցող այդպիսի թեմամին հակահեղափոխականից ավելի վնասգալու է յեվ պեսք է պատվի հեղափոխական օրենքի ամբողջ խստությամբ:

Վերջին ժամանակաշրջանում շատ գյուղական կուսկազմակերպութեաններում հայտնաբերվեցին մարդիկ, վորոնք ոտար են կոմունիզմի դործին: Յերբեմն ել կուսակցութեան մեջ եյին խցկվում պարզապես կուլակային տարրեր, վորոնք «ներկել են իրենց ճակատը»: Կուսակցութեան գյուղական կազմակերպութեանների գտումը, վոր այժմ տեղի յե ունենում էյուստային կովկասում և Ուկրաինայի մի շարք ռայոններում, ուժեղացնում է կուսակցական կազմակերպութեանների մարտունակութեանը, նպաստում է նրանց շուրջը համախմբելու առաջավոր կոլտնտեսականներին, կոլտնտեսային ակտիվին:

1933 թվականի ընթացքում կուսակցութեան անդամներին և թեկնածուներին դոման մասին ՀԿ(բ)Կ կենտկոմի վորոշումը հիմնված է 16-րդ կուսակցական կոնֆերանսի այն վորոշման վրա, թե անհրաժեշտ է պարբերաբար զտել կուսակցական կազմակերպութեանների կազմը, վորպեսզի կուսակցութեանը սխտեմատիկորեն մաքրվի նրա մեջ անխուսափելիորեն խցկվող մանր-բուրժուական տարրերից: Կուսակցական շարքերի այս ընդհանուր գտումը, կուսակցութեանն ազատելով կուլակութեան հետ միացածներից, պնակալեզներից, բյուրոկրատական տարրերից կոմունիզմի համար պայքարելու անընդունակներից, այնպիսի մարդկանցից, վորոնք կուսակցութեան մեջ գտնվելն ողտա-

զործում են իրենց շահասիրական, կարիքիստական նպատակների համար և այլն,—ավելի ևս կամրապնդել լենինյան կուսակցութեան դործողութեանը, ավելի ևս կուժեղացնել նրա կապն աշխատավորական լայն մասսաների հետ:

Հաղթահարելով կուլակութեան մնացորդների դիմադրութեանը, անխնայորեն վերջնական հարված տալով նրա գործակալութեան, աջ ուղորտունխտներին, վորոնք գլխավոր վտանգն են հանդիսանում, անհաշտորեն պայքարելով կուսակցութեան գծի «ճակալիկ» ծուռների դեմ, վորոնք ոգնում են աջերին ու կուլակին, մաքրելով ու համախմբելով կուսակցական շարքերը, մենք կօտոււնակենք կուսակցական կազմակերպությունների հետագա ուժեղացումը ռայոնում, ՄՏԿ-ում, խորհրդակցություններում ու կոլտնտեսություններում, կօտոււնակենք սոցիալիստական յերկրագործության հետագա վերելք:

**ԱՎԵԼԻ ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂՈՒՄ
ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ*)**

Գյուղում կոմյերիտմիութեան զարգացման բնորոշ կողմն այն է, վոր նա վերջին տարիներս զգալի չափով աճել է: Խոշոր, համայնացված յերկրագործութեան աճման հետ մեկտեղ, տեղի յե ունեցել գյուղի կոմյերիտ միութեան վորակային փոփոխութեանը: Արդեն այս տարվա հունվարի 1-ին 110 հազար գյուղական կոմյերիտական բլիշներէց 94 հազարը կոլտնտեսութեաններում են և մոտ 4 հազարը—խորհրդատեսութեաններում: 3 միլիոն գյուղական կոմյերիտականներէց մոտ յերկու և կես միլիոնը կոլտնտեսականներ են:

Գյուղում կոմյերիտմիութեան զարձակմանը բնորոշ կողմն այն է, վոր վերջին տարիներս նրա ամբողջ աշխատանքը յենթարկված էր գյուղացիական աշխատավոր յերիտասարդութեան մորիցացիայի խնդիրներին, վորը կատարվում էր կոլտնտեսային շինարարութեան ծավալման համար:

Այժմ, յերբ մենք գտնվում ենք գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման հետեյալ ետապում, յերբ նախատեսվում է ամենից առաջ կոլտնտեսութեանների կազմակերպչական-օնեստակամ ամբապնդումը, ուժեղ պայքար բարձր բեքի համար, կոյօնեստային մասօճներէ սոցիալիստական վերապաստիարակութեանը,—գյուղում կոմյերիտմիութեան զարձակմանը անպարեզն ավելի յե լայնանում: Սակայն պետք է ընդգծել, վոր գյուղական կոմյերիտական կազմակերպութեաններէ այժման աշխատանքը միշտ չի համապատասխանում նոր պայմաններին, կուսակցութեան նոր խնդիրներին յեյ ունի շատ խոտոր բերութեաններ:

Այդ թերութեաններն առանձնապէս ցայտուն կերպով յերեկուս են հացամթերութեանների ֆրոնտում. կոմյերիտմիութեան այսորվա պայքարից: Պայքար հացի համար—սա մեր կոլտնտեսային գյուղի հետագա սոցիալիստական ծաղկման հիմքն է: Առանց հացի համար պայքարելու՝ չկա պայքար բարձր բեքի, կոլտնտեսային արտադրութեան

վորակի համար: Իսկ շատ գյուղական կոմյերիտական կազմակերպութեաններում ուրիշ պատկեր է նկատվում: Ամեն ինչ կա—և գեղեցիկ բանաձևեր, և ամենալավ հավաստիացումներ, բայց չկա կարեւորագույնը—իսկական բոլշեիկյան պայքար հացամթերութեանների պլաններն իր ժամանակին կատարելու համար: Չկա այն աչքը, վոր հացը արթուն պահպաներ հափշտակիչներից և գողերից: Չկա դեպի թշնամիներն այն լենինյան անհաշտութեանը, վորն սգնում է հաղթահարելու կոլտնտեսային մասսաների հետամնաց մասի մանր-բուրժուական և մանր-սեփականատիրական տրամադրութեանները, կործանիչ հակահարված տալու ջարդված կուլակութեան մնացորդներին:

Իհու ավելին: Առանձին կոմյերիտականներ և նույնիսկ առանձին կոմյերիտական բլիշներ կուլակային ագրեսցիայի ագրեսցիայան օակիրենք էլ են վարակվում հակապետական, մթերութեաններին հակառակ տրամադրութեաններով: Կան փաստեր, թեև յեղակի, յերբ գյուղական կոմյերիտականներն իրենք են հացը թագցրել պետութեանից, իրենք են գողացել կոլտնտեսային հացը, իրենք են հանդես յեկել իբրև կուլակային սարտաժի կազմակերպիչներ, հասնելով մինչև ուղղակի դավաճանութեան բանվորագյուղացիական պետութեան շահերին: Այդ մասին ամենապերճախոս փաստերի մենք հանդիպում ենք Հյուսիսային Կովկասում:

Այստեղից միակ յեղրակացութեանը յեղավ Հյուսիսային Կովկասում, առաջին հերթին Կուբանի ռայոններում գյուղական կոմյերիտական կազմակերպութեանների ստուգումը: Ի՞նչ է ցույց տալիս այդ ստուգումը: Նա ցույց է տալիս ամենից առաջ յերեք փաստ.—գյուղի կոմյերիտմիութեան մի բանի օղակների դասակարգային արբնութեան բթացում, գյուղի կոմյերիտական բլիշների ներմիութեանական, գաղափարական կյանքի ցածր մակարդակ, բայց կապ գյուղական աշխատավոր յերիտասարդութեան լայն մասսաների հետ:

Հյուսիսային Կովկասի դասերն ազդանշան են տալիս այն մասին, վոր գյուղում շատ կոմյերիտական կազմակերպութեաններ, հանգչելով այն խոշոր հաշտութեանների վրա, վորոնք ձեռք բերվեցին կոլտնտեսային շարժման զարգացման հետապում կուլակութեան դեմ պայքարելիս, մոռացան այն հասարակ ճշմարտութեանը, վոր այդ հաշտութեանները բոլորովին չեն հանում որակարգից դասակարգային պայքարը գյուղում: Կուլակութեան արձանները հիմնականում պոկված են, սակայն դեռ շարունակում են մնալ կուլակային մնացորդները, ինչպէս և դեռ արձատախիլ չարված նախապաշարութեանները կոլտնտեսականներին—յերեկվա մանր սեփականատերերի մեջ:

Հենց այս տեսակետից յեկնելով, պետք էր տեսնել դասակարգային պայքարի նոր ձևերը գյուղում, նոր յեղանակները, նոր տակտիկան,

*) «Գրավային» օրաթիւրը—29 նոյեմբեր 1932

վորոնք մեր դեմ գործադրում են կուլակային տարրերը: Հարկավոր էր վաղորդք աչքի առաջ ունենալ, վոր դասակարգային թշնամին, վորը ջարդված է յերիտասարդութեան վրա ազդելու համար մղված բացահայտ պայքարում, կվործի աճող սերնդին տիրանալ ուրիշ ավելի նուրբ, ավելի քողարված միջոցներով, մասնավորապես աճող սերնդի շարքերը խցկվելու միջոցով: Այս բանը չնախատեսեցին Հյուսիսային կովկասի շատ կոմյերիտական կազմակերպութեաններ: Յեվ սրանց մեջ շատ ոտար տարրեր խցկվեցին:

Վնասակնապես մաքել գյուղական կոմյերիտական կազմակերպութեանները կուլակային օարբերից, կուլակի գործակալներից, բարոյալվածներից, կուլակային ֆաղափակներուց կիրառողներից, կամուրիզի գործի օարբերից—ահա կոմյերիտիստիկայի մարտական խնդիրը գյուղում:

Ավելի մեծ դժուրութեան դեպի թշնամիները, ավելի մանրակրկիտ ընտրել այն յերիտասարդութեանը, վորը մտնում է կոմյերիտիստիկային շարքերը:

Պետք է հաստատապես հիշել, վոր մեծ վնաս է բերում սոսկ քանակական աճման յետևից ընկնելը: Այժմ գլխավորը կոմյերիտական կազմակերպութեան վորակի ուժեղացումն է գյուղում:

Իսկ վորակով ուժեղացնել կազմակերպութեանը, նշանակում է կոմյերիտականների ամբողջ յիրեք միլիոնանոց բանակը ներգրավել գյուղում կուսակցութեան խնդիրները կատարման: Կոմյերիտականը պետք է առաջավոր մարտիկ լինի կուստեսային կարգերի ամրապնդման, կուստեսային սեփականութեան պահպանման, բերքի բարձրացման և հացամթերումների պլանների կատարման համար: Թե վարչափ կոմյերիտականը հավասարիմ է լեհիկային կուսակցութեան, վարչափ նա արժանի յե պահպանելու լեհիկային կոմյերիտիստիկային, այդ կերեվա նրանից, թե նա ինչպիսի ակտիվությամբ է պայքարում հացի համար, ագրոսեյանիկայի, աօխասեյի կազմակերպման համար, հասարակական սեփականութեան հափեսակիցների դեմ, կուլակների յեմ ոպորտունիստների դեմ:

Վոչ մի գյուղական կոմյերիտական չի կարող արդարացնել իր մեծ կոչումը, յեթե նա հեռու յե կանգնած հացի համար մղվող պայքարից, կուստեսութեան ամրապնդման, աշխատանքի կազմակերպման, բարձր բերքի և ազրոտեսիկայի համար մղվող պայքարից:

Գյուղի կոմյերիտականը պետք է առաջինը լինի նրանցից, ով դեպի գաշտերն է տանում գիտական-տեխնիկական մտքի բոլոր նոր նվաճումները: Ժամանակ է կտրակնապես հարց դնելու այն մասին, վոր կոմյերիտականը գրեված լինի զոնե օարտական ակրոսեյանիկային գիսեյիկներով: Սա առանձնապես վերաբերվում է կոմյերիտիստիկային

գյուղական ակտիվին: Պետք է իրագործել Հի(բ)կ կենտկոմի 1932 թ սեպտեմբերի 7-ը վորոշումը՝ մտակա կիսամյակի ընթացքում գյուղական կոմյերիտական ակտիվներ պատրաստելու և վերապատրաստելու մասին: «Կոմյերիտական-ակտիվիստը կարող է գյուղացու հարգանքն ու վստահութեանը վայելել միայն այն դեպքում, յեթե նա մտեմնա գյուղատնտեսութեան, յեթե նա սովորի ոգտակար խորհրդներ տալ», «գյուղացիական տնտեսութեան բարձրացման, նրա բարելավման ու ամրապնդման համար» (Սթալին):

Վորակապես ուժեղացնել կոմյերիտական կազմակերպութեանը—նշանակում է վճռակտնորեն աշխուժացնել կոմյերիտիստիկային ներքին աշխատանքը: Մինչդեռ կոմյերիտիստիկային բոլոր կազմակերպութեանները չեն, վոր, որինակ, կանոնավոր կերպով միութեան ժողովներ են հրավիրում, ավելի սակավ—միասնական միութեանական որեր անցկացնում: Գործը խիստ վատ է զնում գյուղական կոմյերիտականների քաղաքական ուսման վերաբերյալ: Կոմյերիտականին կոմունիստ դարձնելու համար հարկավոր է հիմնովին աշխուժացնել ներմիութեանական կյանքը, կոմյերիտականների մեջ սեր ստեղծել դեպի այդ կյանքը, դաստիարակելով նրանց բոլոր կյանքի կուսակցութեան կազմակերպչական սկզբունքների վորով:

Կոմյերիտականը կոմունիստի կրտսեր յեղբայրն է: Նա պետք է սովորի և սովորի, աճի և աճի, քանի վոր, ինչպես Լենինն էր ասում, «լինել կոմունիստ, նշանակում է կազմակերպել և համախմբել ամբողջ աճող սերունդը, դաստիարակութեան և գիսցիովինայի որինակ տալ այդ պայքարում»: Մասսաներին տանել իր հետևից և վոչ թե նրանց պոչից քաշ գալ: Հաղթահարել հետամնաց տրամադրութեանները և վոչ թե հարել նրանց: Միշտ և ամեն տեղ խոսել կոմունիստի լեզվով:

Պետք է խստորեն դատապարտվեն մի քանի գյուղական կոմյերիտական կազմակերպութեանների վորձերը՝ ներփակվել իրենց շրջանակում, չեղոքանալ անկուսակցական աշխատավոր յերիտասարդութեան լայն մասսաներից և մանավանդ կուստեսային յերիտասարդական ակտիվից: Իսկ չե՞ վոր առանց կուստեսային յերիտասարդական ակտիվի վոչ մի կոլեկտիվային կոմյերիտական բոյք չի կարող լավ աօխասել, չի կարող իր ժամանակին գյուղում հեօսութեամբ իրագործել լեհիկային ֆաղափակներուց, Կուստեսային յերիտասարդական ակտիվը—դա մի այնպիսի հոլոր միջոց է, վորի ոգնութեամբ գյուղի կոմյերիտական կազմակերպութեաններն իսկապես վոր մեծ հրաշքներ կգործեն:

Գյուղի կոմյերիտիստիկային վորակի բարելավման խնդիրը հրամայականորեն պահանջում է բարելավել կոմյերիտական դեկավոր

կազմակերպող օրգաններում, ՄՏԿ-ներում, խորհրդատեսուծիքայիններում և կոլտնտեսուծիքայիններում, կատարելագործել միութեան ղեկավարման մեթոդները, ուժեղացնել կուսակցական ղեկավարութիւնը գյուղական կոմյերիտական կազմակերպութիւնների վրա:

Մեր խնդիրը կայանում է նրանում, վոր գյուղի կոմյերիտական ղեկավար կազմը մաքրենք բոլոր անպետք և խորթ տարրերից, ուժեղացնենք այդ կազմը, մանավանդ ՄՏԿ-ներում յեղ խորհեցեստուրյուններում,—տալով հաստատակամ մարդկանց՝ լավագույն կոմյերիտականներից, վորոնք անմիջականորեն զբաղված են կոլտնտեսային ու խորհրդատեսային արտադրութեան մեջ: Այդ կազմերը պետք է կուսակցութեան պահակները լինեն այն պայքարում, վոր մղվում է կուսակցութեան, կոլտնտեսային ապարատը՝ ոտար, հաճախ բացահայտ թշնամի մարդկանցով աղտեղվելու դեմ:

Գյուղական կոմյերիտութեան միութենական ու կուսակցական ղեկավարման գլխավոր խնդիրն այժմ կոմյերիտական ակտիվի ընտրութիւնն է, նրա աճումն ու դաստիարակութիւնը: Պրոլետարական կենտրոններից մանրակրկիտ կերպով ընտրել գյուղի կոմյերիտութեան համար ղեկավար կազմեր, մանավանդ կոմյերիտական աշխատանքի հենակետերի,—ՄՏԿ-ների, խորհրդատեսուծիքայինների և խոշոր կոլտնտեսուծիքայինների համար, վճռականապես պայքարել այդ կազմերի հոտուցութեան դեմ, նրանց ղինել ազրոտեխնիկական գիտելիքներով, գյուղում կուսակցութեան ժամանակակից խնդիրների հասկացողութեամբ—անա կոմյերիտութեան կենտկոմի և նրա տեղական կազմակերպութիւնների կոնկրետ, անհետաձգելի խնդիրները:

Ժամանակ է վերջ տալ կոնկրետ ղեկավարութեան մասին «ընդհանրապես» խոսելուն: Այդ կոնկրետ ղեկավարութիւնը պիտի կիրառել գործնականում: Աղաղակող է, որինակի համար, այն փաստը, յերբ կենտրոնական Սեվանոյ Շրջանի կոմյերիտութեան մարզկոմը հայտարարութիւններ անելով կոնկրետ ղեկավարութեան ոգուտների մասին, միևնույն ժամանակ մոռանում է գոնե յերբեմն զրուցել դայոնական կոմիտեներէ 80 քարտուղարների հետ: Սրանից հետո, ինչ խոսք կարող է լինել ճշգրիտ, ոպերատիվ ղեկավարութեան մասին:

Այժմ, քան յերբևե, բարձր պահանջներ են առաջադրվում կոմյերիտութեան կուսակցական ղեկավարութեան, քանի վոր կոմյերիտութեան խնդիրները, մանավանդ գյուղում, բավական բարդացել են. կոմյերիտութիւնը մենակ, առանց կուսակցական կազմակերպութիւնների սգնութեան չի կարող լուծել այդ խնդիրները: Ուրեմն առավել յեղ մեծ պատասխանատւութիւն պիտի զգան կուսակցական կազմակերպութիւնները կոմյերիտութեան համար:

կոմյերիտութիւնը մի հզոր ուժ է, ստեղծագործական յեռանդի ու նախաձեռնութեան անսպառ աղբյուր, կուսակցութեան ստուգված ղեկը՝ մեր հեղափոխութեան աճող սերնդի վրա ազդեցութիւն ունենալու և նրան դաստիարակելու պայքարում:

Ավելի մեծ ուշադրութիւն ղեպել կոմյերիտութիւնը,—գրանումն է նրա ուժեղութեան զրավականը, մեր կուսակցութեան և նրա կենտրոնական կոմիտեյի լենինյան քաղաքականութեան իրադրոմանը նրա մասնակցելու զրավականը:



ԲՈՎԱՆՆԵՐԻ ԳՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Շեքոյաչիկ—Ջախախել ցանքի և հացամթերումների դեմ կուլակութան
կազմակերպած սարսուռը Կուբանի ռայոններում 3

ՎՈՐՈՂՈՒՄՆԵՐ

1. ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1932 թվի դեկտեմբերի 10-ի վորոշումը 21

2. Հյուսիսային Կովկասի դուրսական կուսակազմակերպությունների գտման
մասին: ՀԿ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ նախագահութան նոյեմբերի 4-ի
վորոշումը (1932 թ) 22

3. Հյուս. Կովկասի դուրսական կոմյերիտական կազմակերպությունների
գտման մասին: ՀամԿՅՅԵՄ Կենտկոմի 1932 թվի նոյեմբ. 6-ի վորոշումը 23

4. ԽՍՀՄ Ժողկոմիտեի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի վորոշումը 24

5. Հյուսիսային Կովկասյան յերկրամասում հացամթերումների պլանը կա-
տարելու մասին: ՀԿ(բ)Կ Հյուս. Կովկասի Յերկրկոմի բյուրոյի 1932
թվի նոյեմբերի 2-ի վորոշումը, մասնակցությամբ ՀԿ(բ)Կ Կենտկոմի
ներկայացուցիչներ ընկ. ընկ. Կազանովիչի, Միկոյանի, Գամաբնիկի,
Շիկերյատովի, Յագոբայի, Չերնովի, Յուրկինի և Կոստրեկի 25

6. Կուբանի ռայոններում հացամթերման և ցանքի ընթացքի մասին: Յեր-
կրկոմի բյուրոյի 1932 թվի նոյեմբերի 4-ի վորոշումը ՀԿ(բ)Կ Կենտ-
կոմի ներկայացուցիչներ ժամակցությամբ 28

7. Հացամթերումների ու ցանքի վերաբերյալ լրացուցիչ միջոցառումներ
մասին: Կուս. Յերկրային Կոմիտեյի բյուրոյի նոյեմբ. 24-ի վորոշումը 32

8. Հացամթերումների ընթացքի մասին: ՀԿ(բ)Կ Հյուսիսային Կովկասի Յեր-
կրկոմի 1932 թվի դեկտեմբերի 16-ի վորոշումը 33

9. Յերկրկոմի բյուրոյի, Ռոստովի քաղկամի և կուսակախիվի միացյալ նիստի
բանաձևը 38

Հ ա վ ե լ Վ ա ծ ն ե Ր

Պատիշիկ—Դեպի նոր մարտեր, սոցիալիզմի հաղթանակի համար 41

Անինա հակահարված ուղղաօդային ուժերին և հաշտվողականներին 51

Դեպի վճարական պայքար կուլակութան մնացորդների և նրա գործակալու-
թյան դեմ 57

Կուսակցության շարքերի մարտական ստուգումը 63

Ամբապնդենը ռայոններն ստուգված կուսակցական կազմերով 68

Ավելի մեծ պատասխանատվություն դուրսում կոմյերիտիության աշխա-
տանքի համար 74



От. редактор
В. К. Цовьян
Тех. редактор
Г. М. Маркарьян

2977
Ах-А

Сдано в наб, 11 I 1933 г.
Сдано в печ, 31 I 1933 г.
Об'ем 5 печ. листа
Тираж 2000 экз.



ԳԻՆԸ
Цена 40 ԿՈՊ.
Коп.

6531

ԳԻՆԸ
9771

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



На армянском языке

СЛОМИТЬ САБОТАЖ СЕВА И ХЛЕ-
БОЗАГОТОВОК, ОРГАНИЗОВАН-
НЫЙ КУЛАЧЕСТВОМ В РАЙОНАХ
КУБАНИ

И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ„

ԳՐԱԳԵՆՏՐՈՆ

ՈՍՍՏՈՎ-ԳՈՆ, ՄՈՍԿՈՎՍԿԱՅՈՒ ՓՈՂ. 53

ԳՐԱԳԵՆՏՐՈՆ (ԿԵՆԳՈՑԵՆՏՐ)